



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





781

9(44)  
—  
Z-84











Թ Ա Լ Է Ր Ա Ն

149




ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ի ԽՍՍԳԻԻՂ Կ ՊՕԼՍՈՅ

1870







ԿԿԿ  
Յ (44)  
7-84

# Թ Ա Լ Ե Ր Ա Ն

---

Գ Ր Ե Ց

2. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ն. ՅԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ի ԽԱՍԳԻԻՂ Կ. ՊՕԼՍՈՅ

---

( 1870 )

3662

J. W. L. F. L. N. J.

1721

1721

J. W. L. F. L. N. J.



J. W. L. F. L. N. J.

J. W. L. F. L. N. J.

6839-57

(1870)



ՆՈՒԷՐ ՄԵԾԱՐԱՆԱՅ

ԱՌ

ՎՍԵՄՓԱՅԼ ՍԱՐԳԻՍ ԷՓԷՆՏԻ ՀՍՄՍՄՃԵԱՆ ,

ԸՆԴՀԱՆՈՒՐ—ԲԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՊԱՇՏՕՆԱՏԱՆ

Բ. ԴՐԱՆ

2004

THE UNIVERSITY OF CHICAGO

1911

DEPARTMENT OF CHEMISTRY

RESEARCH REPORT

NO. 100

A. H. E.

1911



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կան մարդիկ՝ որ ընկերութեան մէջէն այնպէս կ'անցնին ինչպէս գիսաւորներ աստեղաց մէջէն, իրենց շաւիղը լուսաւոր գծով մը նշանակելով :

Այսպէս էր Թալէրան՝ Գաղղիացի երեւելի քաղաքագէտը, որ փառաց յաւէտ սիրահար, քծնեցաւ անոր, ուր և որու քով ալ տեսաւ, քծնեցաւ անոր, ո՛չ միայն յօգուտ անձին այլ ի մեծ շահ իւր հայրենեաց :

Թալէրան՝ իբրև մեծ մարդ հաւասարապէս ենթակաց եղած է խիստ քննադատութեանց և բարձր ներդրողներու. իւրաքանչիւր կենսագիր՝ անոր դործերն ըստ քիսայ մեկնած է, այլ ո՛չ ոք կրցած է այն անձին վրայ իր վերջին բառն արտասանել :

Չեմ գիտեր թէ կրնա՞նք Թալէրանի բարոյակա՛նութեան մէկ դոյզն գաղափարը տալ եթէ ըսենք, թէ նման ճարտար նաւուղին՝ իր քաղաքական ընթացից մէջ փոյթ չ'ըրաւ գիտնալ թէ նաւապետն ո՞վ է, այլ ջանաց նաւուն առաջնորդել, և ազատել զայն նախ քան դ'ամենայն, ըսել կ'ուզեմ ըղհայրենիտ :



Թէպէտ Թալէրան՝ ծառայեց իբր պաշտօնեաց  
վարչութեան այն զանազան ձևերուն, որ Լուի ԺԶի  
զլխատումէն յետոյ Գաղղիոյ մէջ մխտանց կը յա-  
ջորդէին, բայց միշտ իր երկրին բարիքն իրեն նպա-  
տակ ունէր:

Ահաւասիկ այն անձը՝ որուն վրայ կարճատև  
տեսութիւն մ'ընել կ'ուզենք, տեսութիւն մը՝ որ  
անշուշտ շատ նսեմ է. ոչ միայն համեմատելով  
այն գրուածներուն հետ որ Եւրոպայի մէջ Թալէ-  
րանի վարուց վրայ կը տեղան, այլ նաև նոյն իսկ  
Թալէրանի գործերուն հետ: Սակայն բաւական է  
ծանօթայնելու համար մերայնոց այն նշանաւոր է-  
ակը՝ որ Եւրոպայի քաղաքագիտաց մէջ մեծ անուն  
ձգած է, և այն անձը՝ որ այսօրուան պատերազմը  
կէտ առ կէտ դուշակած է:

Խաւսգիւղ 1 Հոկտեմբեր 1870.

Ղ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



# ԹԱԼԷՐԱՆ

---

Ա.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

---

**ԲԵՐԻԿՅՈՐԻ** տիրոջ կուսերու կրտսեր ճիւղէն սերեալ՝ **Թալէրան** հանդամանաց աղնուութեան հետ կը միացնէր հանճարի և արեան աղնուականութիւնը :

Երբ դեռ դիւցիւկ էր, իր ստնատին անդգուշութեամբն իյնալով մէկ սարը միրաւորեց ու կաղ մընաց : Իր ընտանիքը՝ զինքն իրրև խեղանդամ անդրանկութենէ դրկեց և ուղեց եկեղեցական ընել :

Այդ՝ **Թալէրան** զանազան մեհապետաց սաշտօնեան ըլլալէ յառաջ, ստիպեցաւ Սասունոյ սաշտօնեան ըլլալ, և կանաչ սեղանի մը շուրջը համադրային շահուց Վիրայ խորհելու սպասելով սուրբ սեղանին առջև խունկ ծխել :

1773 ին **Բերիկօրի** Սըբայ անունը կը կրէր :



Քառամեայ եկեղեցական՝ աւելի պճնասէր էր քան մանաւանդ պարկեշտ . և իւր դէմքը զինքն աւելի իբր վատչուէր կը ցուցնէր քան թէ համեստ : Գեղեցիկ չէր , այլ աչաց վրայ քաղցրութեան , յրբենի համարձակութեան և հանճարոյ երևոյթն ունէր :

Թալէրանի կենսագիրները միարան են՝ հաստատելու թէ Սբբայ Բերիկօր ոչ այնչափ խոնարհ մանիչակին տարփաւոր էր , որ խորհրդանշան է եկեղեցականութեան , այլ դափնեաց՝ զոր գիտցաւ քաղել իր աստիճանին և ժամանակին հանդամանաց յարուցած խոշն ու խուժն առաջուր կոխելով :

Գեղեցիկուհւոյ մը ներքնասենեակը խորանէն նախամեծար կը համարէր :

Սակայն Տիկին Տիւպարի որ Գաղղիոյ թագաւորին արքունեաց մէջ իր գեղեցիկ աչաց իշխանութիւնը կը բանեցնէր՝ երեկոյթ մը տուաւ , յորում ներկայէր և Թալէրան թախիժ ի դէմս բերելով :

Ինչո՞ւ տխուր էք ըսաւ իրեն յանկարծ տան տիկինը « Բարէ պատասխանեց Թալէրան՝ մելամաղձոտ մտածութիւն մը կ'ընէի » , կը տեսնեմ որ Փարիզու մէջ աւելի դիւրին է կին մը ունենալ քան թէ Սբբայութիւն » : Ընկերութիւնն առ պատասխանին շատ հաւնեցաւ , թագաւորին ահանջն հասուց , և պատրաստաբան Սբբան՝ ստացաւ ինչ որ կը փափարէր :

1780 ին Գաղղիոյ կղերին ընդհանուր գործակալ



անուանած էր : Ա՛րսեն թէ աս թուականին ծովա-  
հենի նաւ մը վարձեց Շուաղէօլ — Աուֆֆիէ անուն  
անձի մը հետ ընկերութեամբ և Անգղիայուոյ դէմ  
դրկեց : Աս նաւուն թնդանօթները վարչութիւնը  
հայթայթեր էր :

1785 ին Թալէրան իր մատակարարութեան հա-  
շիւը շինեց այնպիսի կերպով մը որ կարենայ հասա-  
րակայ ուշադրութիւնը գրաւել : Իր աս գործն իրեն  
համար անցագիր մը դարձաւ ժամանակին նշանաւոր  
արանց քով :

Բայց Բերիկորի Աքբային պաշտպանները որչափ  
հզօր ու բազմաթիւ ըլլային , կարելի չէր իր ապե-  
րասան ընթացքին ներել , որ ատենին բարուց ա-  
պականութեան հակառակ՝ տակաւին գայթակղե-  
ցուցիչ կը գտնէին :

Երբ Օթէօնի Եպիսկոպոսական ամբողջ պարտա-  
մնայ , Լուի Ժ.Չ վարանեցաւ այդ պաշտօնին ան-  
ուանելու աս անձը՝ որ եկեղեցական պատմու-  
հանին պատիւն յարգել չէր դիտէր :

Թագաւորը՝ չորս ամիս շարունակ աս շնորհը  
Թալէրանի դրացաւ և իր խառութիւնը սխալի շա-  
րունակէր եթէ Թալէրանի հայրը՝ որ հաւատարիմ  
ծառայութիւններով արքունեաց նուիրեալ կեանքը  
կը կնքէր , մահուան անկողնոյն մէջ չի թախանձէր  
դԼուի Ժ.Չ , որ իր սնարից քով կեցած էր , իր որդ-  
ւոյն պաշտօնը բարձրացնելու :

Բերիկորի Աքբան՝ 1789 յունվար 17 ին Օթէօնի



Եպիսկոպոս ձեռնադրեցաւ :

Թաղերան՝ իր եկեղեցական առ բարձր աստիճանին մէջ աւելի իբրև աշխարհիկ ոք կը փայլէր, Փարիզու սրահներուն զարդն եղած էր, զանազան ընկերութեանց ոգին և ազնուական դասու ու տիկնայց խօսակցութեան առարկան :

Բ.

ԹԱԼԵՐԱՆ ՅԸՆԴՅԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ .

Գրեթէ հոս կ'սկսի Թաղերանի քաղաքական կեանքը : Քաղաքագէտ մը համազդային յարարելութեանց սահմանը գծելու սրաշունչ ունի և ուրիշ ազդաց ատենին առջև իր երկրին փաստարանն է : Ժամանակիս ազատ խորհողները որչափ զայն անպատուեն, այս արուեստը կամ լաւ ևս այս միջանկը՝ ազդաց ու ազանց հետ պիտի յարատուէ :

Անոնք որ կ'ըսեն թէ քաղաքագէտները վերնան, աւելի աղէկ խորհած կ'ըլլան՝ եթէ ըսեն ազդաց վէճերը վերնան, կիրքերն անհետանան, փառասիրութիւնը լուրջ, վերջապէս չմարդկային բնութեան մէջ յեղափոխութիւն մ'ըլլայ :

Այլ բարէ՛, մարդս ժամանակին հետ կը քալէ, իսկ սատանան ոչ : Չեմ դիտեր քանի հազար



տարու ընէ՛ ՚ի վեր սատանան՝ նոյնն է : Եւ սատանան՝ մարդկային խեռ բնութիւնն է :

Սնոնք որ իրրե գրագէտ զՔերթողս և Եթ տեսնել կ'ուզեն, իրրե արուեստաւոր զմշակս միայն գտնել կ'երազեն, թող նախ վիճը ու փառասիրութիւնը վերցնեն և քաղաքագէտը վերցուցած կ'ըլլան . ախտերն ու հիւանդութիւնները բաւնան և բժիշկները բարձած կ'ըլլան . դատերուն առաջին առնեն և դատաւորք ո՛չ ևս են :

Թալէրան՝ իրր խորագէտ շատ բամբասուած է, և այս տողերը հարկաւոր էին զընթերցողն առաջնորդելու Թալէրանի այն անարեւելին մէջ՝ ուր այնչափ ծառայութիւնք չ'արժանացան Երախտեաց և ուր աս մեծ անձին մէկ քանի սրակասութիւնները՝ որք նոյն իսկ առաքինի մարդկան են բաժին, գողցես աններելի մնացին :

Ազգի մը կեանքը՝ սովորաբար մարդկային ըստ սրանդանոցին, ըսել կ'ուզեմ մարտի դաշտին մէջ անցած արիւնահեղ թատերգութիւններէ կախումն ունի, ինչպէս մարդու մը կեանքը՝ իր մոլութիւններէն և տարերաց բռնութենէն :

Ազգի մը կեանքը երկարել, զ'այն այդ ախտք դաշտերէն հեռացնել կամ անոնց մէջէն փառաց կատարը հասցնել, պարտութենէ առած վէճերը խմաստութեամբ դարմանել, դրեթէ միշտ քաղաքագիտաց գործն եղած է :

Կարդինալ Ռիչլիէօ՝ որ թէև 1624ին կ'ապրէր



և Թալէրանի հետ վիճակի նմանութիւններ ունի ,  
 Ռիչլիէօ՝ ըստ իս առանց Թալէրանի բարձրութեան  
 հասնելու անանկ պարադաներու մէջ էր որ կրցաւ  
 քան զ'ինքն աւելի մեծ գործեր ընել :

Երեք մեծ ձեռնարկութիւններ ըրաւ որ իր ժա-  
 մանակին համար քաղաքական մեծ նշանակութիւն  
 ունէին :

Գաղղիոյ մէջ բողոքականութեան ստացած քա-  
 ղաքական ազդեցութիւնն ու զօրութիւնը ջնջեց :

Սղնուականութեան խռովայոյզ ոգին ու ամ-  
 քարտաւանութիւնը ճնշեց :

Եւ Աւստրիոյ տան անկեցուն փառասիրութիւնը՝  
 որ Եւրոպայի անկախութեան նախ մանաւանդ Գաղ-  
 ղիոյ սպառնալիք մ'եղած էր , խոնարհեցուց :

Թալէրան՝ խռովայոյզ ժամանակի մը մէջ յա-  
 ոաջել սկսաւ և փառաւոր ձեռնարկութիւն մ'ընե-  
 լու առիթը չ'ունեցաւ : Այլ իր մեծութիւնը այն  
 յաղթանակաց վրայ կը կայանայ , զ'որ իր դէմ ե-  
 լած անհնարին դժուարութեանց մէջ տարաւ :

Կրօնին հակառակ յեղափոխութիւն մը զինքը  
 կրօնաւոր ու եպիսկոպոս գտաւ . յեղափոխութեան  
 հակառակ վարչութիւններ ալ զինքը յեղափոխու-  
 թեան զաւակ տեսան :

Եթէ ներհուն և խորազննին անձ մը չ'ըլլալու  
 ըլլար , չ'էր գտնար այն բարձր՝ յորում բաղմեալ  
 ընկերային կապերու քայքայման , արքայի մը գըլ-  
 խատման և կրօնին բարձման ժամանակ կրցաւ իր



աղղու ձայնը հնչեցնել, և հետզհետէ Քորսիքայի աշխարհակալին կիրքը մեղմել, Լուի ԺԷի ուղեղ հայթայթել, Լուի-Ֆիլիբի ծառայել, և որ աւելին է զՊաղղիա նուաստութենէ մ'ազատել, առ որ կը ձգտէին Նաբոլէօնի անկումէ յետոյ Փարիզ մտնող դաշնակցաց ջանքերը:

Լուի ԺԶ որ իր շուայլ նախորդներու կը յաջորդէր, ստիպեցաւ 1789 Մայիս 3ին ընդհանուր-ժողով [էդա-ժէնէ'րօ] մը գումարել ըստ պահանջմանց ժամանակին, որն որ երեք գլխաւոր կարգերէ կը բաղկանար. յ'եկեղեցականաց, յ'աշնուականաց և հասարակ ժողովրդէն:

Աս ժողովին մէջ Օթէօնի Նախկուպոսը՝ իր թեմին ներկայացուցիչն ըլլալով՝ պատշաճ դատեց իր ընտրողաց ճառ մը խօսիլ, որուն մէջ գործադրելի վերանորոգութիւնները՝ ժամանակին երեակայական գաղափարներէն ու եղջերուաբաղներէն կ'որոշէր ու կը զատէր:

Իր կենսագիրներէն մէկը որուն աւելի հետեւեցանք սա կարճառօտ գործին մէջ, Սնգղիացի գրագէտէ մ'առնելով՝ այսպէս կ'ամփոփէ Թալէրանի քաղաքական ծրագիրը, « Սահմանադրութիւն մը « հաստատի՝ որ ամէնուն հաւասար իրաւունքներ « տայ, մեծ օրինագիրք մը կազմի՝ որ կարևոր օրէնքներն ամփոփէ ու պարզէ, արդարութիւնը « երազելու միջոցներ ձեռք առնուին, ըստ բըմայ « մայ ձերբակալութիւնք ջնջուին, պարտուց վերա-



« բերեալ օրէնքները մեղմանան, երդուելոյ ատեան  
 « կազմի, մամլոյ ազատութիւն տրուի և անհատա-  
 « կան թղթակցութիւնք անրոնարարելի ըլլան,  
 « Գաղղիոյ գաւառային կամ ներքին մարտերը վեր-  
 « նան, մենավաճառութիւնն արգիլուի, ելեմտից  
 « մէջ սիսթէմ և քարեկարգութիւն մտնայ, առանձ-  
 « նաշնորհութիւնք վերնան և տրոյ հաւասար ու կա-  
 « նոնաւոր բաշխում մ'ըլլայ » :

Աս ծրագիրը մէջ բերող դրագէտը զ'այն սքան-  
 ճելի կը գտնէ : « Թայէրան » կ'ըսէ նա՝ « Թայէրան՝  
 « մարդկային կատարելութեան և զ'ընկերութիւն  
 « դրամագլխի և աշխատութեան միջոցաւ վերա-  
 « կազմելու վրայ չը խօսիր, յաւիտենից խաղաղու-  
 « թիւն մը չը խոստանար և տիեզերական եզրայ-  
 « բակցութիւն չը քարոզէր : Իր առաջարկած բա-  
 « բեկարգութիւնները պարզ էին, ընդունուած գա-  
 « ղափարներու կը պատկանէին, և կրնային արդի  
 « ընկերութեան արմատին վրայ պատուաատիլ » :

Աւթսուն « տարիներ կը յաւելու նոյն հեղինա-  
 կը՝ ութսուն տարիներ անցան այս փոփոխութեանց  
 վրայ, ոմանք արհատարհեցին և խոտեցին, ոմանք  
 ալ գործագրեցին զ'անոնք, որք այսուամենայնիւ  
 զանազան յեղափոխութիւններէ անցնելով՝ այսօր  
 այն խարխալը կը կազմեն, որուն վրայ իմաստուն  
 և լուսաւորեալ Գաղղիայիք իրենց վարչութեան  
 և ընկերութեան սիսթէմը հիմնել կը բաղձան » :

Արդարեւ ի՞նչ մեծ տարբերութիւն մեծ քա-



զարգացիտի մը աստիճանաւոր յատաճդիսութեան  
 աս սքանչելի հիմնադրին և Ռօսիայի, Մարայի,  
 Քամիլ-Տէմուլինի և այլ յեղափոխականաց երազ-  
 ներուն մէջ, որոնցմով այսօր խալ Բրուտօններ և  
 ուրիշ վառվառն՝ այլ ոչ խորագէտ մտքեր ստ-  
 գորուած են :

Յատաճդիսութիւնն օրէնք մ'ունի, և այս օ-  
 րէնքն անոնք և եթ գիտեն՝ որք զ'ազգ մը այնպէս  
 կը զննեն ինչպէս ճարտար բժիշկ մը հիւանդին երակը :

Այս օրէնքն երկրիս հետ հաստատուած է, ա-  
 րարչութեան մատենին մէջ արձանագորուած է,  
 և գեղեցիկ այլ ապատամբ հանձարներու փորձե-  
 րուն հակառակ կը տիրէ և պիտի տիրէ :

Թող Քիւլիէ նկարագրէ թէ երկրիս հողերու  
 դասակարգութիւնը ինչ կերպով և որքան ծամա-  
 նակի մէջ գլուխ ելած է, թող պատմէ երկրիս յե-  
 ղափոխութիւնը՝ որ սակաւ առ սակաւ կը կատարի,  
 թող Արիօ ըսէ մեզ թէ քաղաքակրթութիւնն ինչ  
 միջոցներով աս բարձրութեան հասաւ, և թող Քօն-  
 տօրսէ ցուցնէ թէ մարդկացին միտքն ինչպէս և  
 քանի դարու մէջ զարգացաւ. և այն ատեն կը  
 տեսնենք թէ անհնար է ընկերութեան ճակատը  
 թատերարեմի վարագուրին պէս մէկէն ի մէկ փո-  
 խել :

Արպէս զի վերանորոգութիւն մը կարելի ըլլայ,  
 և որպէս զի նոր օրէնք մը սովորութիւն դառնայ՝  
 պէտք է տակաւ առ տակաւ գործադրի :



Թալէրանի շրջահայեաց ողին՝ չէր կրնար յեղատխտական հոսանքին առջևէն երթալ, նա՛ զայն չափաւորելու կոչուած էր, և իր կոչումը կը ճանչնար: Թալէրան՝ գիտէր թէ Սնդղիոյ սահմանադրութիւնն ու ազատական օրէնքները եթէ ՚ի ըսկըզբանէ գործադրելի և հետզհետէ կատարելագործելի հանդամանք մը չ'ունենային, չ'էին կրնար աւելանալ և յ'օրինակ այլոց հաստատուն մընալ:

Իր քարոզները՝ գ'որ անշուշտ եկեղեցիներու մէջ կ'ուտար, և որք աւելի օրուան խնդիրներու կը վերաբերէին, ճառի մը ձևն առած էին, և փոխանակ դրօշափոխ ու սուրբերու, ժամանակին երևելիներն իրենց առարկան ունէին, դժբախտաբար մեղի չեն հաւած:

Չեմ գիտեր ինչու պատրաստաբան ետխակոտութիւն բառերն ու երկդիմի խօսքերը հաւարողք՝ անկատարամբ ամենին անտարբեր մնացած են:

Թալէրան՝ ընդհանուր ժողովին մէջ իր հանձարով աջնչափ մեծ դեր մը կը խաղար որչափ Մկրտաչ իր ճարտասանութեամբ և Սիւյէս իր փմատութեամբ:

Ինքն էր որ ջանաց ժողովրդին իշխանութիւնն ընդարձակել, ինքն էր որ յաջողեցաւ կղերը երարոզ դասու ներկայացուցիչներուն հետ խօսանել, ինքն էր որ ընդհանուր ժողովոյն անկախութեան նպատակց, վերջապէս ինքն էր որ իբրև անդամ



Գաղղիոյ սահմանադրութիւնը շարադրելու պաշտօնըն ունեցող մասնագիտովին՝ Գաղղիացւոյ ապագայ իրաւունքներն հրատարակել տուաւ :

Այս փութաջան սահմանադիրն՝ իր անունը խառնած է բոլոր այն թուականին մեծ փոփոխութեանց ու ձեռնարկութեանց մէջ, որոցմէ միոյն այն է չափու և կշիռներու միութեան վրայ տեղեկագիր մը տուաւ առ ընդհանուր - ժողով 1790 ապրիլ 30ին և որուն մէջ Փիւրկոյի առաջարկած վերանորոգութեան սիսթէմին մէկ գաղափարը կը նըշմարուի :

Թալէրան՝ կը բողոքար որ իւր առաջարկութիւնն ընդունելի ըլլայ ո՛չ միայն Գաղղիոյ մէջ այլ և յ՝Անգղիա, և կուզէր որ Փարիզու գիտութեանց ձեմարանին և Լոնտօնի արքունի ընկերութեան անդամներէն խառն յանձնագիտով մը կազմի իր առաջարկութեան վրայ խորհելու համար :

Թալէրան՝ մինչև զ'արդ ժողովրդական՝ իր ժողովրդականութիւնը մասամբ խիբ կորոյս Հրէից քաղաքացիի իրաւունք տալու առաջարկութեան նըպաստամատոյց գտնուելով :

1789 ին Հանդիսարան Րեդիսանտը-ժողովոյ անուն գործ մը տպուած է, որուն հեղինակը կը կարծուի Լարլօ անուն անձ մը : Աս գրքին մէջ Թալէրանի ընտիր մէկ նկարագիրը կը գտնուի, Սակն անուան տակ սրօղեալ :

« Սակն՝ իր հրատարիչ ձեերն ունի որք մինչև



« անգամ զ'առաքինութիւնս կը գեղեցկացնեն : Իր  
 « յաջողութեան առաջին գործիքը սքանչելի միտքն  
 « է . մարդիկները ներողամտութեամբ և սրբազա-  
 « ները սրտը արիւնով դատելով՝ այն չափաւորու-  
 « թիւնն ունի որ խնայանայն ճշգրիտ հանգամանքն է :  
 . . . « Յսկէ՛ն՝ միտքէն շ'անցընէր մեծ համբաւի մը  
 « շէնքը մէկ առուր մէջ կառուցանել : Բարձր սու-  
 « տիճանի մը հասնելով համբաւը կ'սկսի քիչ քիչ  
 « նուազիլ և իր անկումն իր հետ կը տանի զ'երջան-  
 « կութիւն և զ'անգորր , այլ Յսկէ՛ն՝ ամէն բանի պի-  
 « աի հասնի , վասն զի օգուտ պիտի քաղէ այն ա-  
 « ութիքներէն որք խմբովին կը ներկայանան այն մար-  
 « դուն որ ոչ երբէք զ'բախտ կը բռնաբարէ : Իր ըն-  
 « դունած ամէն աստիճանը՝ նշանաւոր պիտի հանդի-  
 « սացնէ նոր ձիրքի մը զարգացմամբ և պիտի ժող-  
 « ուէ այն քուէներու խումբը որ զ'մարդ ամէն սրա-  
 « բապ մնացած մեծ պաշտօններու կը կոչեն :  
 . . . « Յսկէ՛ն՝ սրբազաներու գիջում կ'ընէ և  
 սրբաւոր կը համարի 'ի սէր խաղաղութեան զոհողու-  
 թիւններ ընել առանց դեղևելու այն սկզբունքնե-  
 բուն մէջ որ իր բարոյականին և վարմանց հիմ ու  
 խարխիս ըրած է :  
 « Յսկէ՛ն՝ ունի բնութեան քաղցրութիւնը , սիրուն  
 երևոյթի հրապոյրը և դիմաց հաճոյքը :  
 . . . « Յսկէ՛ն՝ զ'մարդիկ այնչափ լուր կը ճանչէ որ  
 ներբողներու չ'ապրուիր , և եթէ մտերմութեան ե-  
 րասներու կը ժպտի , շողորթութիւնը կը մերժէ ո :



Գողցես Նաբո՝ Թալէրանի ապագայ յատկա-  
թիւնները առ մէկ քանի տողերուն մէջ գուշակած  
է և թափանցեր է այն խմաստուն գլխուն գաղա-  
նեաց, որոյ վրայ հաւասարապէս կը զարմանան  
պարսաւողք ու գովարանք :

Երբ ընդհանուր - ժողովը՝ կղերին քաղաքական  
ասհմանադրութիւնը քուէի դրաւ և ընդունեցաւ,  
Թալէրան զ'այն ընդունող կրօնաւորաց առաջինն  
եղաւ և իսկոյն երդուաւ զ'այն պահելու, երդում՝  
զ'որ 'ի բաց առեալ երկու եկեղեցականք, Գաղղիայ  
եկեղեցւոյն բոլոր պաշտօնեացք խապառ մերժած էին :  
Թալէրան ժամանակին պահանջմանց աւելի մեծ զի-  
ջում մ'ըրաւ հաւանելով ձեռնադրել այն եպիսկո-  
պոսները՝ զ'որ ընդհանուր - ժողովը կ'ընտրեր իրեն  
դէմ ըմբոստ գտնուող կղերին տեղ :

Արովհետեւ Փարիզու արքեպիսկոպոսական աթո-  
ռը պարապ էր, Թալէրանի առ ընթացքը իր վա-  
ռասիրութեան կ'ընծայէին :

Ոմանք 'ի լրագրատետաց զ'այն սյս աթոռին ա-  
մենէն աւելի յարմար և յաջողակ ընտրելի մը կը  
ներկայացնէին. ոմանք ալ որ աւելի բազմաթիւ  
էին, կը հաշուէին այն զանազան պատճառները.  
որք չ'էին ներէր զ'Թալէրան գաղղիական եկեղեցա-  
կանութեան առաջին բարձր հանելու :

Իսկ ինքն ամենեւին անտարբեր՝ գովեստն ու  
օրարաւը միևնոյն անհողութեամբ կը լսէր. իր անդ-  
գայ պաղարխանութիւնն այնչափ նշանաւոր եղած է,



որ Միւրա Նարոյէօն Ս. նոյն քեռայրը կ'ըսէր թէ՛  
 եթէ մարդ Թալէրանի շաքինն ապտակ մը դարնէ՛  
 դէմքէն բան մը չ'երևար, դողցես հարուածն ըն-  
 դունողն ինք չ'է :

Սակայն պարտք սեպեց ջրել անոնց կարծիքը՝  
 որք կը կարծէին թէ շահով խաղերու մէջ մեծ դու-  
 մարներ շահած ըլլայ, միանգամայն սուտ հանեց իր  
 Փարիզու արքեպիսկոպոսութեան թէկն ածելը :

Ահաւասիկ այն նամակէն մաս մը, որ ժամանա-  
 կինն ցրագրաց միոյն մէջ հրատարակել տուաւ :

« Չ'իս Փարիզու արքեպիսկոպոսական ամբօսին  
 « իրր հետամուտ ցոյց տուող սուտ լուրի մը առթիւ  
 « տարածայնութիւն մը ելաւ, իրր թէ վերջերս խա-  
 « դու տան մը մէջ վաթսուն կամ եօթանասուն հա-  
 « դար Փրանք շահած ըլլամ : Հիմա որ զ'իս վերո-  
 « յիշեալ բարձին վրայ տեսնելու երկիւղը կ'անհե-  
 « տի, կ'ենթադրեմ թէ իմ ըսելիքներու պիտի  
 « հաւատան : Ճշմարիտն այս է որ երկու ամսուան  
 « մէջ երեսուն հազար Փրանք շահեցայ, ոչ թէ խա-  
 « դի այլ մամաւոր տուներու տատրինջի ակումբին  
 « մէջ, որն որ իր կազմութեան նայելով իրրե մաս-  
 « նաւոր միարանութիւն մը կը նկատուի » :

Այս նամակին թուականն է 9 սեպտեմբեր 1791 :  
 Ոսկւոյ սէրը՝ գինւոյ ճաշակը՝ վերջապէս եկեղեցա-  
 կան սրարդութեան դէմ երեւելի դանցաւորութիւնք՝  
 մանաւանդ Յինիադէրոյի նորընտիր եպիսկոպոսին  
 օծումը՝ Պասլին դայրայման շանթերը Թալէրանի



վրայ ձգեցին :

Պատէն կոնդակ մ'եկած էր սիրուն եկեղեցա-  
կանը դատապարտելու համար և որուն վրայ Մօնի-  
դէօր լրագիրն այսպէս կը խօսէր :

« Սնդեալ հինդշարթի Պատէն կոնդակ մ'եկա :  
« Տը Թալէրան—Բերիկօր , Օթ հօնի նախորդ եպիս-  
« կոպոսն աս գրութեամբ կախակայեալ է 'ի պաշ-  
« տանանց , և բանադրեալ էթ է յետ քառասուն  
« օրուան չ'ապաշաւէ » :

Օթ հօնի եպիսկոպոսը՝ դադանասպէս Միրապօյի  
հետ միանալով՝ կ'ուզէր որ միապետութիւնն ամրա-  
պընդէ սահմանադրական ազատութիւններով : Աս  
սկզբունքն այնչափ ճարակիութեամբ ու ճարտարու-  
թեամբ դրոխ հանելու կ'աշխատէր՝ որ հասարակա-  
պետականք ամենեին անկասկած՝ զ'Թալէրան դրե-  
թէ իրենց կուսակից կը համարէին :

Համեմատենք հաս դարձի մարդը՝ խօսքի մար-  
դուն , Պապղիսայի Աիկերունը՝ քաղաքագէտ եկեղե-  
ցականին հետ . և կը տեսնենք որ Միրապօյ էթէ  
տարէր չ'ախտի կարող ըլլար 33 տարի վերջը ընե-  
լու , ինչ որ Թալէրան՝ իր խնամուած դարձունեւ-  
թեամբ ըրաւ , այսինքն Գրանասայի օրինաւոր թա-  
ղաւորաց կրտսեր ճիւղն 'ի դուհ հանել :

Միրապօ պերճախօս էր , Թալէրան խորադննին .  
Միրապօ թաղաւորական էր թերևս համոզմամբ և  
ուղիղ մտօր , այլ թողութաւրդը՝ կը կարծէր թէ իր  
լեղուն՝ որ իր ամենէն ազդու և ամենէն յատուաւոր



դէնքն էր , արքունեաց ծախած է :

Թալէրան՝ զխոցաւ ընդհակառակն խոհեմու թեամբ գործել և իր սովորական հեռատեսութեամբ թողուլ այն զաղափարը՝ որոյ կատարումը դարձեալ իրեն , այլ ուրիշ ատենի վերապահեալ էր , և որ եթէ այն ատեն զլուխ ելլելու ըլլար , եթէ կ'ըսեմ ըստ իւր փափագին , Լուի—Յելիբի հայրը՝ թագաւոր նստէր , Յրանսայի և թերևս բայտ Եւրոպայի սրատմութիւնը փոխուած պիտի տեսնէինք : Յրանսա՝ այն ատեն Աւաղերլիցի յաղթութեան արեգակը չ'պիտի ողջուներ , բայց Աւթերլուի մէջ ինկած զաւակներն ալ չ'պիտի ողորար :

Գ.

ԹԱԼԵՐԱՆ Ի ՏԱՐ ԱՇԽԱՐՀ

1792 Թուականին Փարիզ չափաւորական դաշտաբաներու տէր անձանց համար սկսած էր վտանգաւոր օթեան մ'ըլլալ : Թալէրան ատենէն յառաջ իմացաւ թէ ինքն ալ աւելորդ է սա քաղքին մէջ և թէ գործելու ժամանակը դեռ եկած չ'է : Թողուց Գաղղիան մեկնեցաւ , բայց մինչև անգամ իր բնակութեանն համար յատկանալի երկիրն իմաստութեամբ ընտրեց : Փոխանակ ուրիշ զաղթելոյ



նման Գերմանիա և Եւրոպայի ուրիշ կողմերն երթալու՝ Անգղիա գնաց աստատանելու :

« Աս երկրին մէջ, կ'ըսէր, Գաղղիացւոցմէ չ'մտայուելու չոսի Գաղղիոց մօտ՝ և անոնց գործերուն միջամուխ ըլլալով՝ անուճա չ'ազարտելու չոսի հետուեմ » :

Ստուգիւ Գաղղիայէն մեկնելու բուն ժամանակն էր . արդէն յեղափոխականաց արհաւիրքը կ'սկսէր, և մինչդեռ Թալէրանի նախորդ ընկերներն 'ի Փարիզ մերթ երկխդի մերթ յուսոյ, մահու և կենաց մէջ կը ծփային՝ ինքն 'ի Լօնտօն անգղիացի ազնուականութեան գիրկը կ'ըրօսնուր :

Նախորդ եպիսկոպոսը՝ որ Անի եղերաց վրաց գաղղիացի և գրեթէ յեղափոխական էր, Թէմզ գետին ասիանց քով նոր Ալպիօնի զաւակ դարձաւ : Քիչ կը խօսէր, ծանրութեամբ կը վարուէր, ո՛չ ընտանութիւն կ'ընէր, ո՛չ զուարթութիւն կը ցցնէր, վերջապէս հանգամանօք բողորովին անգղիացի, սրբատով և եթ Գաղղիացի մնացած էր :

Տեսնելով որ վտանգն այնչափ մեծ չ'է իրեն համար, կամ որ և է ուրիշ մտածութեամբ, Թալէրան՝ փութաց հայրենիք դառնալ, որ հասնելով Լօնտրայի Գաղղիական դեսպանատան խորհրդական անուանեցաւ : Այլ ոչ բուն իսկ Գաղղիոց դեսպանին պաշտօնը, ոչ ալ իր Լօնտօնի ակումբներու մէջ ունեցած ազդեցութիւնը՝ չ'կրցին յաջողիլ, ըստ որում Գաղղիոց գահը՝ վտանգի և տաղնապի :



Մէջ էր : Գաճուն վերջնական անկումը անցի ունե-  
ցաւ օգոստոս 10 ին : Աս դէպքէն օր մ'առաջ Թա-  
քերան Փարիզ կը դանուէր . երկրորդ օրը նորէն  
Լօնոսնի ճամբան բռնեց :

Փարիզէն մեկնելու հասար տախտակած էր Տան-  
թօն մեծ — յեղափոխականին դիմել անցադիր մ'առ-  
նելու , դ'որ կ'ըսեն թէ ժալիտի մը դիմով ստացաւ :  
Կերեայ օր այսպիսի քաղաքագէտէ մը զատ ո՛չ որ  
կարող էր գեղեցիկուհւոյ մը ազդու ժալիտը ձեւացը-  
նելու :

Սակայն այս անգամ Լօնոսնի մէջ գտած ըն-  
դունելութիւնը առաջինին չէր նմանէր . Սնդդիոյ  
դահլիճը օր Թորինեթէ կաշտեալ էր՝ Թաքերանի վը-  
րոյ կը կասկածէր թէ ինքն ևս կորսիլ հասարակա-  
պետական մ'եղած լըլոյ , և բռնադատեց զ'նա  
Սնդդիայէն դուրս ելնելու :

Թաքերան՝ Միայեալ — Եւանդներն երթալ ու-  
ղեց , և մեկնելէ յառաջ յաջողեցաւ աիկ կուսակ-  
ցութեան անդամներէն իրեն հասար քարեխօսագրեր  
կորդել , օրոյ մէջ կը դանուէր Լօրս Լանտամաու-  
նէն առ Աւօշինիթն նախադաճն ուղղեալ նամակ մը :

Թաքերան՝ ինչպէս առ պղտիկ տեղեկութիւնը  
կ'ապացուցանէ , անկեանկատարեալ քաղաքագէտ  
մ'էր , քաղաքագէտ էր նա , ի պաշտաման , քաղա-  
քագէտ՝ քառանձնութեան , քաղաքագէտ՝ ի ժողո-  
վի , քաղաքագէտ՝ յատենի , քաղաքագէտ էր նա՝  
պանդխտութեան մէջ , իր ելիլին մէջ , քաղաքա-



գէտ՝ ճախողութեան և տաղնապի մէջ, որոնցմէ  
 գիտէր թիչ մնաստի և շատ անգամ շահով դուրս  
 ելնել, քաղաքագէտ՝ յաջողութեան և անդորրու մէջ,  
 որոնցմէ կարող էր ամենէն մեծ օգուտը քաղել.  
 քաղաքագէտ էր մինչև անգամ իւրացնոց հետ,  
 քաղաքագէտ՝ իր սկզբունքներով, վերջապէս քա-  
 ղաքագէտ ըստ ամենայն ընդարձութեան բառին:

Թայէրան՝ Ամերիկայէն չախորժեցաւ, ինքզինք  
 իր հայրենիքէն և դորձունէութեան թատրէն շատ  
 հեռու կը տեսնէր: Ուստի և իր վերջին ինչքը նաւ  
 մը ստանալու նուիրեց, Եւրոպայ դառնալու համար:  
 Սակայն Գաղղիայէն առած լուրերը՝ իր դիտաւո-  
 րութիւնը թիչ մը ժամանակի համար փոխել տուին:

Թայէրանի պանդխտութեան ժամանակ՝ Գաղ-  
 ղիան՝ ռամկապետական վարչութեան ամէն շրջան-  
 ներէն կ'անցնէր: Դժբաղդ Լուի ԺԶ ի գահուն  
 հետ խորանն ալ տապալած էր: Կառաւինարանը՝  
 հասարակաց փրկութեան մասնաժողովին ձեռք՝ վար-  
 չական միջոց մը դարձած էր: Ամէն բան քաօս էր:  
 Ռօպէսրիէն հայրենեաց աղատարար կը կոչուէր:  
 Պագշտութիւնն իրրև բարոյական կ'անցնէր, ըն-  
 կերութիւնը՝ յ'անուն յեղափոխութեան կը յետա-  
 դիմէր, ոչ միայն սովորութեանց և զգեստուց՝ այլ  
 նաև բարուց մէջ:

Այլ այս տխուր վիճակը չէր կրնար յարատև  
 մնալ, դեռ Երանապի մէջ օղջախոհներ կը դրա-  
 նուէին: Լուսաւորեալ դասեր սկսան խոսժանն



ի կարգ բերել և ոսկեգօծ պատանկուքիս և մ'երևան  
 ելաւ որ աղէտին վերջ պիտի տար : Փարիզենի  
 ընկերութեան մէջ Տիկին Թալիէնի և Սթաէլի խը-  
 նասօք հանձարեղ կանանց փրկարար ազդեցութիւնը  
 նորէն հաստատուեցաւ : Տեսարանը կը փոխուէր ,  
 տեսարանը՝ փառաւոր էր , այլ այս տեսարանին  
 զվաւոր դերասանը կը պակսէր , զվաւոր դերա-  
 սան մը՝ որ Թալէրանէ դատ ո՛չ ոք կրնար ըլլար :

Թալէրան իր բացակայութեան ատեն ճեմարանի  
 անդամ ընտրուած էր : Աս ընտրութեան ինք չ'էր  
 աշխատած , իր հանրաւն էր որ կը գործեր : Այս  
 ընտրութիւնը որ իրեն մեծ պատիւ կը բերէր , աս  
 ընտրութիւնը ցոյց կուտար թէ մոռցուած չ'է :  
 Վերադարձի ժամը հնչած էր , և Թալէրան կուգար  
 անմահութեան պատկն ստանալու :

Դ

### ԹԱԼԷՐԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՅ

Փարիզու մէջ Թալէրանի առաջին գործն եղաւ  
 ճեմարանի մէջ եր'իու յիշատակագիր կարդալ , մին  
 Անգղիոյ Միայեալ—Նահանգաց հետ ունեցած  
 ատր և առիկ յարարերութեանց վրայ , միւսն ալ  
 դադթականութեանց , մին՝ անգործութեան ժամերու



արդիւնք , միւսը՝ նուրբ հետազօտութեանց արգասիք , այլ երկուքն ալ նշանաւոր , երկուքն ալ Թաղէրանի արժանի , երկուքն ալ սա կերպով բացատրեմ , իր հանձարոյն յաատորան :

Հաղիւ հաղ սա ընթերցման վրայ երեք շաբաթանցած էր , Թաղէրան՝ արտաքին գործոց պաշտօնէոց անուանեցաւ : Իր բաժրացումն ինքն այսպէս կը պատուէ :

« Սէնի եղերաց վրայ բնակող բարեկամի մը տուն  
 « գայեր էի ճաշելու , ընկերութեամբ Տիկին Սթա-  
 « կի , Պարասի և խումբ մը մարդոց , որք սա  
 « տունը կը յաճօխէին : Պարասի երխտասարդ  
 « բարեկամներէն մեկը դուրս ելաւ ծով մտնելու  
 « համար և խեղդուեցաւ : Վարիշն (Պարրաս) որ  
 « դ'այն գորովանօք կը սիրէր մեծ թախիժ ցոյց  
 « տուաւ : Մխիթարեցի զինքը (ի տղայ տիտց մըխի-  
 « թարելու վարժ էի) , և իր կառքին մէջ մինչև  
 « Փարիզ ընկերացոյ իրեն : Քիչ ժամարակ վերջը  
 « արտաքին գործոց պաշտօնէութիւնը պարաս  
 « մնաց : Պարրաս գիտցաւ որ սա պաշտօնին հաս-  
 « նիլ կը փախագէի , և հասոց անոր շնորհիւ իր  
 « ազդեցութեան զո՛ր սա եղանակաւ շահած էի :

Տիկին տը Սթակէլ , գաղղիացի երեւելի գլորագիտուհին կը պնդէ թէ ինքն եղած ըլլայ Թաղէրանի բաժրացման շորժառիթ : Մուտայք մեծ գործելը կը սիրեն , հանձարեղ տիկնայք ալ մեծ մարդիկը :

Տիկին տը Սթակէլ՝ որ Գաղղիոց և թերևս Եւրո-



պիտոյ հին ու նոր կանանց առաջինն է որ դրադիտա-  
կան շրջանին մէջ բարձր տեղ մը կը բռնէ, կը սիրէր  
գլխաւորան : Տիկին տը Սթաէլ, զոր Լամար-  
թին՝ « կանայի կիրքերով մեծ մարդ » կը կոչէր, և  
որուն համար խօսակցութեան ու գրագիտութեան  
Միրապօն է կ'ըսէին, Տիկին տը Սթաէլ գորովա-  
նայ զգացումներ ունէր Թալէրանի վրայ :

Սակայն Պարրասի կուսակցութիւնն՝ աւելի իր  
չահերուն համար գլխաւորան պաշտօնի կոչած էր  
քան թէ Ֆօրիէի ու Տէրֆիէի հեղինակուհւոյն հաճու-  
թիւն պատճառելու մտօք :

Թալէրան՝ իր պաշտօնեայ, Վարչութեան (Տի-  
րէքթօւար) խորհուրդ տուաւ պետական հարուստ  
մ'ընելու իր ընդդիմադիրներէն ազատելու համար :  
Ասով հանդերձ չ'կրցաւ ռամկավար հանրապետա-  
կաններուն իր վրայ ունեցած կասկածները բոլորո-  
վին փարատել և տեսնելով որ գինքն իրրեւ ազնու-  
ական և գաղբող կը նկատեն, հրաժարական տուաւ :

Կ'ըսեն թէ որ մը վարչութեան անդամներէն  
Ռէվպէլ որ գլխաւորան հաշտ աշօք չ'էր տեսներ,  
« Երեւոյն գաղթական, ըսաւ իրեն, քու տրամա-  
բանութիւնդ ոտքիդ պէս ծուռէ » :

Պատրաստարան Թալէրան՝ առիթ գտաւ աս  
տնձէն վրէժ մ'առնելու, աւելի սուր բայց փափուկ  
և ճարակաւ ընտրուած հեղինակութեամբ : Ռէվպէլ որ  
չսակն (չաշի) էր, քիչ մ'ատեն անցնելէն վերջը  
որ մը հարցուց Թալէրանի թէ գործերն ին՞չպէս



կերթան . պատասխանեց թաղերան , « խոտորնակ  
ինչպէս որ կը տեսնէք » :

Թաղերան՝ այնուհետև . ջանաց վարչութիւնը  
տապալելու , և յաջողելէ ետք օդնեց առաջին Հիւ-  
պատասին (Պոնաբարդ) որ բարձր իշխանութիւնն իր  
ձեռաց մէջ ամփոփէ :

Թաղերան՝ վարչարան (Տիրէթուար) անկման  
նպատեց ոչ թէ անձնական շահերէ մղեալ , այլ  
համարում մ'ունենալով թէ վարչարարը Պապղիւս  
բարձրութեան երաշխիք մը չէր ընծայէր :

## Ե

### ԹԱԼԷՐԱՆ ԸՆԴ ՀԻԲՊՍՏՈՍՈՒԹԵԱՄԲ

Թաղերան՝ Պոնաբարդ չ'էր սիրէր , անոր փա-  
ռասիրութենէն կը վախնար , և ինքն էր կ'ըսէն որ  
վարչութիւնը տաքնապէ մը ազատելու համար խոր-  
հուրդ տուաւ քաջամարտիկ զօրապետին Եգիպտոս  
արշաւել :

Դէպ ի Արևելք , այն հաղար ու մէկ գիշերներու  
երկիրն արշաւանք մը , զ'երիտաւարդ զօրապետը  
պիտի շլացնէր , և արշաւանաց անհնարին գժուա-  
լութիւնները զ'որ Թաղերան անշուշտ կը գուշակէր  
Եգիպտոս ասարդաց կետարի մը լուծին պիտի փրկէր :

Երբ Թաղերանի հաշիւները կատարեալ չ'էրան ,



Երբ Պօնաբարդ յաջողեցաւ Լօմապատիոյ մարգա-  
 գետիններուն մէջ ստացած փառքը Եղիապտոսի ա-  
 լազներուն մէջ ալ պահել, Թալէրան՝ իր կարծի-  
 քը փոխեց :

Յաղթական դօրապետին վերադարձը խնդադին  
 դիմօք ողջունեց, գուշակեց անոր ամբարտաւան  
 դիտարութիւնները և միացաւ իրեն հետ : Նա՛  
 դիտեր թէ Պօնաբարդ զՊատրիարքայի պատաճ  
 երկաքի ձեռք պիտի բռնէ, այլ միանգամայն կար-  
 ծիր մ'ունէր որուն համեմատ մարդ մը կարող էր  
 ընելու ինչ որ սկզբունքներ չ'էին կրնար : « Երբ,  
 կ'ըսէր, ընկերութիւն մ'անկարող է վարչութիւն  
 մը կազմելու, սէտք է այն ատեն վարչութիւնը՝  
 զ'ընկերութիւն կազմէ ստեղծէ » :

Թալէրան՝ միահեծան իշխանութիւնը կարմիր  
 հանրապետականաց տիրապետութենէն նախամե-  
 ծար համարելով, իր հայրենեաց շահերուն համե-  
 մատ գործ մ'ըրա՞ւ թէ ոչ :

Աս հարցման պատասխան տակ յառաջ ըսենք  
 թէ մենք աս տեսութեան մէջ չ'ուղեցինք Թալէ-  
 րանի վարուց ոչ բացարձակ դադանցողն ըլլալ, ոչ  
 ալ անոր անխորհուրդ պարտաւոր :

Թալէրան Պօնաբարդի օգնելով միմիայն մէկ  
 փառիւղ մ'ունէր, բամկափարաց ապերասան կիր-  
 քերը շղթայել : Երկու ջարեաց փոքրագոյնն ընտ-  
 րեց և ծառայեց միոյն փառաւոր իշխանութեան,  
 քան թէ բազմաց անսանձ կիրքերուն :



Արդարեւ անիշխանութեան մէջ բռնաւորք բաղ-  
մաթիւ են և անտանելի, իսկ Պիկտաաորութեան  
մէջ մէկ հատ, և այն ալ ոչ այնքան մնասակար :

Ինչպէս ժողովուրդ մը կրնայ երբեմն անարդար  
ըլլալ, նոյնպէս ժողովրդեան մը գլուխը հոգ չ'է  
ինչ անուն ալ կրէ, կրնայ բռնաւոր ըլլալ :

Են կայսերք որք անիրաւեցան, և են որք զ'աղդ  
մը խղճիւ վարեցին, են գահերէցք որք արդար էին,  
և են որք զիրաւունա ժողովրդեան առ ոտն կոխեցին :

Աղգի մ'անկասութիւնն աւելի իր դատախարա-  
կութենէն կասումն ունի, քանթէ իր վարչական  
ձեւէն :

Միայեալ — Նահանգներն ընկերհաշտիկ վարչու-  
թիւն մը կը կազմեն, և շատերուն համար իբր ու-  
րիշ ազանց տխար կը ծառայեն :

Հոն ալ տակայն դռնուեցաւ անձ մը, նախա-  
գահ Պուքանան՝ որ իր պաշտաման վերջին տարին,  
մէկ գործով քիչ մնաց իր հայրենեաց բաժանման և  
անկման սրտաճառ պիտի ըլլար, գործ մը՝ որ գեր-  
եաց ազատութեան համար սկսեալ եղբայրասպան  
պատերազմը շորս տարի երկարելու հետեանքն ու-  
նեցաւ :

1860 թուականին Պուքանանի նախագահութիւ-  
նը պիտի լրանար, ինքը՝ Փէնսիլվանիա նահանգէն  
էր ուր գերութիւնը ջնջուած էր, բայց ռամկասկե-  
տականաց կուսակցութեան կը վերաբերէր որք գե-  
րեւարաց հետ դաշնակից էին : Տեսնելով որ իր յա-



Զորդը՝ որ արդէն ընտրուած էր, բողոքովին ուրիշ  
կուսակցութենէ մ'է. վարպետութեամբ Միսայեալ—  
Նահանգաց նաւատորմիդը ծովերը ցրուեց, բանա-  
կը առանց հարկի դէսլ 'ի Արևմուտք դրկեց և բողոք  
ուաղմամբերը հարաւային նահանգներուն մէջ փո-  
խադրեց:

Ինքն՝ Ամերիկեան միութեան թերևս աւելի մեծ  
հարուած մը տար եթէ Ամերիկեան ժողովրդին ծան-  
րախոհ ոգին ու դատարարակութիւնը՝ զ'ինքն ուժա-  
թափ չ'ընէին, եթէ Պուքանանի քով Ալինթոն մը  
չ'ըլլա՛ր:

Թալէրան՝ Անկլո—Սաքսոն ցեղին փորձերուն  
տեղեակ ըլլալով՝ վարչական ձևին կարևորութիւն  
չ'էր տար: Նա դիտէր որ բարեկարգութիւնն հաս-  
տատելու համար զօրաւոր անձ մը պէտք էր, և Ա-  
մերիկեան ազատ սահմանադրութենէ մ'առաջ,  
սահմանադրականներու ժողովուրդ մը կազմելու  
համար Ուոշինկթընի մը Ռիկտատորութիւնը:

Իր դիտաւորութիւնն անկէց ալ յայտնի է որ  
սաստիկ դիմադրութիւն մ'ըրաւ Միէյէսի սահմա-  
նադրութեան ծրագրին, որ առաջին Հիւպատոսին  
իշխանութիւնը խաղառ կ'ամփոփէր: Մէկը՝ Թալէ-  
րանի առջև կը պնդէր թէ Միէյէս խորունկ միտք  
մ'ունի: Ի՞նչ կ'ըսէք, ըսաւ Թալէրան, խորունկ,  
այսինքն պարապ.

Թալէրան՝ մի և նոյն համոզմամբ ց'կեանս Հիւ-  
պատոսութեան, պատուոյ Աէզոնի հաստատութեան



և Հռոմի հետ դաշնակցութեան կողմնակից էր :

Թալէրան՝ առ վերջին գործէն օգուտ քաղեց  
Հռոմի արքունիքէն կոնդակ մը կորուցելու, որով Հռոմի եկեղեցւոյն գլուխը գողցես իր բանադրանաց յ'ետս կոչումը կ'ընէր :

Սա հետաքրքրական գրութիւնը՝ հոս մէջ կը բերենք ցուցնելու համար թէ ո՞րպիսի հանճարի տէր էր Թալէրան, որ կը յաջողէր անլուր զիջումներ ընել տալու արքունեացն այն՝ որոյ քաղաքականութեան ոգին յ'այսմ կ'ամփոփի, « Ո՛չ կարեմք » :

« Սա ամենասիրելի որդին մեր Շարլ—Մօրիս — Թալէրան :

« Յ'ուզեցաք 'ի ցնծութենէ, 'ի լուր ջերմ փառքին՝ որ ունիք հաշտուելու համար մեզի և եկեղեցւոյ հետ : Մեր հայրենի գթութեան ընդերքը ձեզ նկատմամբ ընդարձակելով՝ մեր վիակատար իշխանութեամբ քանադրանաց թոշոր կայսերէն զՁեզ ազատ կը կացուցանեմք : Եկեղեցւոյ և մեզ հետ հաշտուելնուդ համար սլարտք կը դնեմք Ձեզ ու գործութիւն բաշխել, նա մանաւանդ Օթէօնի եկեղեցւոյն աղքատաց զ'որ կառավարեցիք : Իշխանութիւն կուտամք Ձեզ կրել զհանդերձ աշխարհականի, վարել գրադաքական գործս, թէ մնալով որպէս կամիք 'ի սլաշտաման գոր կը վարէք, և թէ յայլ սլաշտամունս, որոյ Ձեր վարչութիւնն զՁեզ կրնայ կոչել » :



Ս.ս կոնդակն զ'Թալէրան պարզ աշխարհական  
մ'ընելով՝ իշխանութիւն կուտար իրեն ամուսնանա-  
լու : Թալէրան իրեն ամուսին ընտրեց զ'Տիկին Կը-  
րանտ , սյրի Հեղկուհին , որ աւելի գեղեցկութեամբ  
կը փայլէր քան թէ հանձարով :

Թալէրան՝ իր աս ընտրութիւնը կ'արդարացնէր  
ըսելով , « Հանձարեղ կին մը սաէպ իր ամուսնոյն  
անունը փտանդի մէջ կը դնէ , մինչդեռ տխմար կին  
մը միսխայն իրենը :

Զ.

#### ԿԱՅԱՐՈՒԹԻՒՆ

Զ'կայ Գաղղիոյ պատմութեան մէջ թուական  
մը որ առաջին կայսրութեան փառքն ունենայ :

Մեծին Կարալասի (1) (Շարլըմայն) ընդարձակ  
տէրութիւնը միջին դարու մէջ , և Լուի ԺԴ ի դա-  
րը՝ տակաւին նսեմ են Քորսիքոցի աշխարհակալին  
մեծագործութեանց քով :

« Նարոէոն կ'ըսէ , Շառլ Նուիէ Գաղղիայի  
« գրագէտը՝ իր բախտով բոլոր այն առաւելութիւն  
« ներք կատարելապէս ունէր , որք կրնան մեծ մարդ  
« մը մեծ դարու մը դրսիս անդրնել » :

(1) Մեծն Կարալաս Գաղղիոյ ու Քերմանիոյ մայրեալ դաս  
« այ կ'իշխէր :



Թաղերան՝ որ մեծ յեղատխտութիւն մը տեսած էր կուգար առ մարդուն պաշտօնեան ըլլալու որ երեկ որդի ազատութեան երկրորդ օրը զ'իւր մայր գաւերնէն կ'ընէր :

Գաղղիոյ առաջին կայսրութեան յաղթանակները այնչափ ծանօթ են որ հարկ չ'ենք տեսներ զ'անոնք համրելու : Մեր պարտքը ցուցնել է թէ Թաղերան որչափ մասնակից եղաւ անոնց , և որ աստիճան ազդեցութիւն ունէր այն մարդուն վրայ որուն առջին բողոք Եւրոպայի Գահակալը կը խոնարհէին :

Թաղերան իբրև արտաքին գործոց պաշտօնեայ , Նարօլէոն կայսեր արտաքին քաղաքականութեան , սանկ ըսենք առաջնորդն էր : Ս.ՂԼ իր համոզիչ խօսքերը , իր խելացի խորհուրդները քիչ անգամ կը լսուէին նոր Օղոստոսէն որ բախտին երես առած զաւակն էր :

Նարօլէոն՝ կը կարծէր թէ փառքն իրեն հետ ա մուսնացեալ է , և իր կենաց հետ միայն կրնայ լըմընալ : Թաղերան՝ կը հաւատար թէ ամէն բան վախճան մ'ունի : Նարօլէոն՝ հոգ չ'էր ընէր Գորդեան հանդոյցի մը պատահելու , վասն զի զ'այն իր սրուլ կը քակէր : Թաղերան կը ջանար վտանգէն հեռանալու , վասն զի գիտէր թէ բախտն անհաւատարիմ է : Նարօլէոն՝ բարձունքէն աստեղքը կը զիտէր առ որս համիւլ կ'երազէր , Թաղերան՝ անդունդները կը չափէր , որոց մէջ զլորեւու վախն ունէր : Նարօլէոն յաջողութեան մէջ կեսար մ'էր , իսկ Թաղե-



րան ձախողութեան մէջ մեծ մարդ մը :

Նարոյէոն որոշիչ յաղթութիւն մ'ըրած ատեն՝  
Թալէրան նոր քաղաքականութեան ծրագիր մը կը  
սրատրաստէր իրեն : Ուլի յաղթութենէն վերջը ,  
ճարպիկ քաղաքագէտը հետեւեալ ծրագիրը կը ներ-  
կայացնէր կայսեր :

« Մինչդեռ Ձեր Ահապատութիւնը՝ յաղթու-  
« թիւններ կ'ընէ որ փառաւոր հաշտութեան մը  
« պիտի առաջնորդեն , ես ալ հաստատուն խաղա-  
« դութիւն մ'ընելու միջոցներուն վրայ կը խորհիմ :

« Չորս տէրութիւն կան յ'Եւրոպա , Գաղղիա ,  
« Ռուսիա , Անգղիա , Աւստրիա : Անգղիա և Գաղ-  
« ղիա դէմ առ դէմ գտնուելով և իրենց հանձարին  
« համար իրարու նախանձորդ ըլլալով՝ կրնան իրրե  
« իրարու բնական թշնամի նկատուիլ . ուրիշ կեր-  
« պով ըսելով՝ անհնար է որ Եւրոպայի մէջ պատե-  
« րադմ մը ծագի առանց աս երկու տէրութիւններն  
« իրար ձգելու : Այսպիսի պարագայի մը մէջ Ռու-  
« սիա՝ չ'կրնար Տրանսպի մտերիմ բարեկամն ըլ-  
« լալ , քանի որ արեւելից վրայ գաղափարներ կը  
« սնուցանէ , գաղափարներ՝ զոր խենդութիւն է  
« քաջալերել : Աւստրիա՝ միւս կողմանէ հաստատ  
« դաշնակից է Անգղիոյ այնչափ ատեն՝ որչափ որ  
« իր սահմանները մեզի մօտ գտնուին : Սրդ ճար-  
տար քաղաքականութիւն մը պէտք չ'է ուրիշ բան  
« ընէ , այլ Ռուսիոյ արեւելեան երազներն յօդս հա-  
« նէ և զ'Աւստրիա դրկէ այն սահմաններէն՝ որ մե-



« զի մօտ ունի . . . » :

« Ս. ծրագիրը՝ կ'ըսէ Մինեէ պատմաբանը ,  
Թաղերան՝ այնպիսի ատեն մը կը յղանար , որ քան  
մ'անկարելի չ'էր : Գաղղիոյ մեծութեան պատճառ  
պիտի ըլլար եթէ գործադրուէր և Երասպայի բոլը-  
րովին ուրիշ ուղղութիւն մը պիտի տար » :

Նարօլէոն՝ կը պնդէր թէ Թաղերան խորհուրդ  
տուած ըլլայ իրեն ղեղրայրը Սպանիոյ գահը նստեցը-  
նելու : Թաղերան՝ ստէպ կը կրկնէր թէ ընդհակառակն  
ուզած էր ղկայսրն այս խորհուրդէն ետ կեցնել :

Սպանիոյ տիրապետութիւնը՝ արդարև Նարօլէոն  
կայսեր փառաց արատ մ'եղեր էր : Ինքը Մատրի-  
տի արքունեաց գայթակղեցուցիչ ընթացքէն և ար-  
քունի գերդաստանին գծտութիւններէն օգուտ քա-  
ղել կ'ուզէր առանց մտածելու թէ Սպանիայիք ա-  
ւելի կ'ընտրէին իրենց վարչութեան գլուխը մովի  
Սպանիայի մը տեսնել , քան թէ առաքինութեան  
տիպար օտարական մը , թէև նոյն իսկ Երասպայի  
գլխատարին եղրայրն եղած ըլլար :

Թաղերանի պէս անձ մը չ'էր կրնար իրաց վիճա-  
կին այս ատիճան անտեղեակ ըլլալ , և ոչ ալ ան-  
խոհեմ փառասիրութեան մը գործիք ըլլալով՝ հա-  
մադրային իրաւունքներն առ ոտն կոխել :

Ըստ իր մէկ կենսագրին , Թաղերան՝ առ խընդ-  
րոյն մէջ մէկ խորհուրդ միայն տուած էր , Էպրի  
հիւսիսային կողմը Գաղղիոյ անցնել և ղ'Բորթու-  
կալ Սպանիոյ հետ միացնել :



Թալէրան՝ կը գուշակէր թէ Նարոյէոն Սպանիոյ վրայ փառասէր խորհուրդներ տնի . կը տեսնէր որ անոր եղբայրը Ժօզէֆ 1803 էն սկսեալ Սպանեօլեօրէն կը սովորի , վաղ կամ անադան Յիլիբի և Իզապէլի կրած թաղը դըռտն անցնելու համար , բայց արժան չէր դատէր այսպիսի դիտաւորութեան մինչև իսկ հաւանութիւն տալ :

Երբ Գաղղիական բանակներն առանց կանխաւ իմացնելու , առանց սխտերազմի հրատարակութեան , Պուրիօս ու Պարչէլօնա քաղաքները գրաւեցին , երբ ապստամբութիւն մը Սպանիոյ Կարուտա Գ . թագաւորը գահընկէց ըրաւ և Նարոյէոն կայսրն այս երկիրը կերպով մ'իր թագին միացնելու համար խարդախ միջոցներու դիմեց , Թալէրան՝ դ'որ ժամանակակիցը ոմանք կը գրադարտեն իրբև անարգ փաղարուչ , դ'որ իր կենսապրաց շատերը կ'ուզեն ցուցնել իրբև աւելի շահու քան իրաւանց սիրահար , Թալէրան՝ աղղու կերպով բողոքեց . « Թագերը կը գրաւեն ըստ բաց խարդախ կերպով չ'են յախըտակէր » :

Պէօնեօ կուտը որ վերջերս իր յիշատակագիրքը հրատարակեց կ'ըսէ , թէ Թալէրան իշխանը՝ Պայօնի մէջ անցածը կատարեալ գիտէր . « Յաղթու « թիւնները կ'ըսէր ինձ , չ'են կարող այսպիսի գործ « մը ջնջել , որովհետև յոսի է , նենգութիւն է , « խարդաւանք է » : Չ'եմ գիտեր վերջն ինչ պիտի « ըլլայ , բայց սխախ տեսնէք թէ աս նկատմամբ ո՛չ



որ կայսեր ներողամիտ պիտի գտնուի .  
 Իր վեհապետին խարդաւանայ մրայ պսակս կը  
 խօսէր այն մարդը՝ զոր ոմանք խարդաւանիչ կոչե-  
 ցին : Չենք գիտէր մինչև երբ մարդկու թիւնը պի-  
 տի թողու որ իր դատին բարեկամներն ու թշնամի-  
 ները մի և նոյն ցանկին մէջ արձանագրին , մինչև  
 ե՞րբ նախանձ , մախանք և դրախարտութիւն , ինչպէս  
 սմակեր զ'արտիին , հանճարներու փայլը պիտի ծած-  
 կեն :

Սպառնայ սերնդեան մը պիտի մնայ կեսագրու-  
 թեան մէջ անձին ճշմարիտ յատկութիւնը գծել ,  
 պատմութեան մէջ ճշմարտութիւն մտցնել և պատ-  
 մական մարդոց գերը ներկայացնել ամենևին աղատ  
 'ի կրից , որք կը ջանան մեծը նուաստացրնել , փա-  
 րաւորն արատաւորել և բարձրը մէկ խօսքով գը-  
 շորել :

Մեծ մարդոց մանաւանդ մեծ քաղաքագիտաց  
 հանճարը զ'իրենք դրախարտութեան կը դատաւարտէ  
 և դատաւարտած է . Ռիչլիօ՝ ատելի էր իր ժա-  
 մանակակիցներուն և Պերիքլէս Սթենայի քաղա-  
 քադէար՝ իր խոհեմութեամբ և ամէն զգուշութիւն  
 ներով չ'էր կրցած ջրել իր հայրենակցաց մեծ մա-  
 սին այն կարծիքը՝ թէ իր հրապարակային կենաց  
 մէջ անձնական շահերն իրեն առաջնորդ առած է :

Պերիկլէս՝ Սթենքի համար կը գործէր , կ'ըսէին  
 թէ իրեն համար կ'աշխատի : Պերիկլէս՝ այր հեռա-  
 տես և խորազննին , 'ի վաղուց կը նախատեսէր թէ



Սպարապետոց և Սթեփանոսոց մէջ սպառերազմ մը տեղի պիտի ունենայ և Սթեփանոս ծովային ու ցածարային զօրութիւնները կը բաղմապատկէր : Իր թշնամիները կ'ըսէին թէ սպառերազմը հարկաւոր կ'ընէր իր անձնական իշխանութիւնը սրահելու համար : Քրաթիմուս ու Եւբոլիս կատակերգակ քերթողներն իր վրայ կը յարձակէին և «Քսանթիբեայ որդին» (Պէրիկլէս) ասէն կերպով կը հարուածէին :

Յետ ժամանակաց սպամութիւնը՝ կը ճանչէ թէ Պէրիկլէս իր հայրենեաց համար աշխատեցաւ, անարատ էր իր վրայ եղած ամբաստանութիւններէն և իրաւունք ունէր ժողովրդին համակրութեան :

Թալէրան՝ Պէրիկլէսէն աւելի դժբախտ դռնուեցաւ աս մասին, ըստ որում անոր նման ժողովրդական չ'էր, և Ալիլլիէոյէն աւելի աստելի, որովհետև անոր չափ իշխանութիւն չ'ունէր : Քեռ սպամութիւնը 'ի նպատակ իրեն չ'խօսիր, դեռ սպամութիւնը չ'ըսէր թէ՛ Թալէրան մասնակցութիւն չ'ունէր Սնկիէնի դքսին սպանման գործին մէջ, զոր զօրաւոր բաղուկ մը օտար երկրէ մը դուրս հանելով Ղաղղիոց մէջ ղինուորական ատենի մը կը մատնէր, և անամօթ կուսակցութիւն մը մահուան ճիրաններուն կը յանձնէր :

Սակայն ինչ ալ ըսուի, Թալէրան՝ աս դքսին մահը յոռի քակ գ'ոճիր կ'անուանէր, և ասով կը ծաղրէր ու կ'արհամարհէր զ'անոնք որք բոլոր մեծ մարդոց վրայ կը տեսնեն հանձար մը և չ'են դռնար սիրտ մը :



Չ'կայ պատմարան մը՝ որ չ'խտատուլանի թէ Թալէրան կայսրութեան կշտամբելի գործերը կշտամբած չ'ըլլայ : Տեսնելով որ իր խորհուրդներն այլ ևս չըսելի չէին, և նկատելով որ կայսրութիւնն իր անկման կը մերձենայ, Աւսթերլիցի արեգակը խաւարել կ'սկսի, քիչ մ'ալ յոքնած ու ճանճրացած, հրաժարեցաւ իր պաշտօնէն :

Քիչ ատենէն Ծուշէ՝ ոստիկանութեան պաշտօնեան ալ պաշտօնէ կը ձգուէր, այնպէս որ Գաղղիոյ առաջին կայսրութեան երկու գլխաւոր նախարարները՝ որք ամենէն աւելի կարող էին դ'այն տապալելու, կայսեր քովէն միւսոյն ժամանակ կը հեռանային :

Նարոյէօն՝ 1814ի պատերազմին ձեռք չ'զարկած կ'ըսէր թէ մատնիչներ դ'ինքը կը շրջապատեն, և յանկարծ Թալէրանի կողմը դառնալով՝ տասը վայրկեանի ջախ թշնամալիր խօսքեր ուղղեց իրեն : Թալէրան՝ բոլոր աս միջոցին գլխաւորաց, փեղոյր 'ի ձեռին և վառարանի մը քով կեցած անտարրեր մը տիկ կ'ընէր : Երբ Նարոյէօն յանդիմանելէ գաղրեցաւ, Թալէրան իր բարեկամներէն մէկուն ձեռքէն բռնելով դուրս ելաւ : Իրեն հանդիպողները չէին կրնար մակարերել թէ ներսն ինչ անցած է :

Նարոյէօն՝ Եւրոպայի վեհապետաց հետ այնպէս կը վարուէր, ինչպէս Գերմանիոյ կայսերք ատենօր Գերմանացի հարկատու իշխանաց և կայսրընտիրներու հետ :



Աս վիճակը չէր կրնար տեսչ, մանաւանդ այն  
 ատեն երբ իր ամենէն նրբամիտ խորհրդականը իր  
 քով չէր. Եւրոպա՝ Նաբոլէօնի դէմ կը դաշնակցէր  
 և կայսեր դահլնիկց լինելու ժամը հնչած էր.

Նաբոլէօն՝ դաշնակցաց դէմ սլաօներադնամ ատ-  
 տեն, Թալէրան մեծ փոյթ ունէր Փարիզէն չհե-  
 աանալու. ուր խաղաղասէր թաղաւորի մը վերա-  
 հաստատութեանն համար ոգիները սլիտի պատրաս-  
 տէր: Նաբոլէօն՝ ճիշդ այն ժամանակ հրաման ըրաւ  
 Թալէրանի որ Խնամակալ — Կայսրուհւոյն հետ  
 Պլուա քաղաքը երթայ: Երբ Թալէրան՝ առ հըրա-  
 մանը կ'ընդունէր դեռ Նաբոլէօն թաղը կորուսած  
 չէր, հաւանականութիւն ալ կար որ իր ընտանիք  
 փոխուի: Արդ՝ յայտնապէս չհնազանդիլ խոհեմու-  
 թիւն չէր. ուստի հանձարեղ միջոց մը դառաւ իր  
 գիտցածն ընելու, որով կայսեր ալ միանգամայն  
 հաւատարիմ կը դառնուէր: Ռէմիւզա տիկնոջ միջո-  
 ցաւ, ոյս կնկան այրը համողեց որ Փարիզէն հան-  
 դիտաւոր կերպով դուրս ելած միջոցին զ'ինքը ձեր-  
 բակալ ընէ: Ռէմիւզայի այրը՝ իրեն եղած պատ-  
 ուէրը կատարելապէս գործադրեց, և երբ Թալէ-  
 րան քաղրէն դուրս կ'ելնէր, խումբ մ'աղգային  
 պահապանաց գլուխն անցած արգիլեց զ'ինքը,  
 յայտնեց իրեն թէ պետք չէ հեռանայ և զ'անկա  
 իր Սէն — Պլորանթէնի ասպարանքը տարաւ, ուր  
 կայսեր նախորդ սրաշտօնեան՝ պատիւ ունեցաւ ըն-  
 դունելու դաշնակից տէրութեանց դահակալներն ու



Պիւխէր և Ուէլլինկթըն զօրապետները, որոց մին՝  
Բրուսիական և Երկրորդն՝ Սնդղիական բանակաց  
դուխն անցած՝ կը մտնէին այն քաղաքը, որ դեռ  
տարի մը յառաջ իբր նոր Հռոմ աշխարհի հրաման  
ներ կ'ուտար :

Է.

### ՎԵՐՍՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՊՕՆՆԵՐՈՒ

Թալէրան՝ առած մ'ունէր, որ յաւէտ կը յեղձն  
դէր . « Ս, մէնուն չ'վայելէր տապալող շէնքի մը հետ  
կործանիլ » : Նա մանաւանդ իրեն չ'էր իյնար կայ  
սէր հետ կործանիլ : Եթէ Թալէրան՝ դաշնակիցները  
ժպտելով չ'ողջունէր, Գաղղիա պիտի նուաւտա  
նար, մաս առ մաս բաժնուէր, և զաւարի մի՛մակ  
մ'ունենար :

Ինչպէս առ գործին միւս գլխուն մէջ տեսանք,  
դեռ կը գտնուին Գաղղիացի պատմարաններ՝ որք  
Թալէրանի մատուցած ծառայութիւններն առ ոչինչ  
կը գրեն, և անոր ճշմարիտ դերը կուրանան : Ծրէ  
աւերիք — Լօք՝ իր սրատուրիսէ վերահաստատութեան  
Պարպօնեանց դրքին մէջ այսպէս կ'ամբաստանէ  
դ՛Թալէրան :

« Խաղաղութեան արաջին դերէր չ'ըլլալուն, տեսարա  
« նին միայն դձուճ դերասաններ երևցան :



« Մարդ մը որուն համբաւը արտաքոյ կարգի  
 » կերպով կը բարձրացնեն , Թալէրան՝ փոքր խար-  
 « դաւանայ , և սյած մեքենայութեանց հողին եղաւ ,  
 « որք առ եղերտիկան օրերուն զվսաւոր գործելն է ,  
 « ին : Պուրպօնեայ վերադարձը որոշելով հան-  
 « դերձ , չ'էր ուզէր որ առանց սլայմանի ներս մըտ-  
 « նեն . այլ այն սլայմաններն որ կ'ուզէր առաջար-  
 « կել՝ լոկ իր աճնական շահերուն կը վերաբերէին ,  
 « թէ որ ուրիշներն ալ առ սլայմաններէն օգուտ  
 « քաղեցին , այդ ալ հարկը սլահանջեց , և թէ որ  
 « Թալէրան՝ քանի մը քաղաքական իրաւունքներու  
 « վրայ բանակցեցաւ , այդ ալ անտարբերութեամբ  
 « ըրաւ : »

Թողունք սակայն այս ժողովրդական գիրքը՝ ո-  
 թուն այս էջը գործին վայլը կը նսեմացնէ , հեղի-  
 նակին տաղանդը կ'արատաւորէ . և մէջ բէրենք  
 Աերվինուս գերմոնայի սլատմաբանին դատողու-  
 թիւնը , զ'որ իր ԺԹ Երոյդ դարու սլատմաբիւն վեր-  
 նագրով՝ անմահ գործէն կը քաղենք , գլուխ գոր-  
 ծոյ նշանաւոր սլատմաբանին . զ'որ քան զ'նմանիս  
 գեր 'ի վեր կը դատեմ :

Նախ Աերվինուս , կը սլախարակէ զԹալէրան  
 (էջ 93) և 100 առջ կը նուիրէ ճարտար քաղաքա-  
 քէտը մրտուելու : « Ստեղի էր կ'ըսէ նա յեղախա-  
 « խութեան կուսակիցներու , թէ և ընդհանուր —  
 « ժողովին մէջ ծառաութիւններ մատուցած էր ա-  
 « նոնց . . . , առեղի էր ազնուականաց , որոնցմէ կը



« սերէր և որոյ զօրութիւնը խորտակելու աշխատէր  
 « էր . . . . ատելի էր Յիկեղեցւոյ անդամներուն , ու  
 րոյ կը վերաբերէր իր կոչմամբ , և զ'որ իր սրտա-  
 « նեկութեան ատեն անպատուեց , և յետոյ կործա-  
 « նեց . . . . ատելի էր Պօնաբարժի անկեղծ կու-  
 « սակիցներուն , վասն զի աս վերջնոյն արտաքին  
 « գործոյ սրաշտօնեան ըլլալով , ինչպէս վարիչներու  
 « իշխանութեան ատեն . . . . գրեթէ բոլոր տէրու-  
 « թեանց , Պերմանիոյ , Սնդղիոյ և այլն , իր ան-  
 « հաւատարմութիւնը , ընչաքաղցութիւնը , շահա-  
 « խընդրութիւնն ու նենգութիւնը զգացուցած էր » :

Արդ կը հարցնէ Ալէքսինուս . ի՞նչ կրնար ընել  
 այսպիսի մարդ մը որուն խօսքը կ'ըսէ դժբաղդարար  
 դեռ աս քուսակսնիկն իբր սատգաւ կ'անցնէր :

Ս,յԼ յետոյ աս մի և նոյն սլատմարանը՝ իր նոյն  
 գրքին (Ս. Հատոր) 300 երորդ էջէն մինչև 306 ե-  
 րորդ էջերը դարձեալ Թաղերանի կը նուիրէ , ցուց-  
 նելու համար թէ ի՞նչ չ'ըրաւ այն մարդը , զ'որ  
 քիչ մը վերը՝ կ'արհամարհէր , և սլատակու համար  
 թէ ինչպէս Թաղերան՝ կարող եղաւ դաշնակցաց  
 առջև Պաղղիոյ սլատիւր սլահել , Պաղղիոյ՝ որուն  
 բանակները ցրուած , դանձը սլարպուած , և բոլոր  
 կենսական զօրութիւնները սլատերազմի դաշտերու  
 վրայ ապառած էին :

Թաղերան՝ իր հանձարին շնորհիւ դաշնակից տէ-  
 րութեանց մէջ երկպառակութիւն կը ձգէր , որպէս  
 զի իր ձայնը զօրաւոր կերպով հնչեցնէ , և կ'ընէր



միայնակ ինչ որ մէկ միլիոն շորքով կարելի էր ընել : Մի և նոյն Աէրովինուան է որ կ'ըսէ թէ , « Թաթիւրան իր քաղաքական և բարոյական տկարութիւնը հանձարեղ առածներով ծածկելու ճարտարութեամբ իւր անթիւ իր բոլոր փայլով յ'երևան , « կը հանէր . . . : Թաթիւրան քիչ ժամանակուան մէջ ս'նպաստաւոր դիրք մ'առնել կուտար Գաղղիոյ . . . »  
 « Թաթիւրան՝ Սևասրիոյ և Սնդղիոյ հետ 1815 յուն , « վար Յի դաշնադրութիւնն ստորագրեց , որ այս « տէրութիւնները իրենց դաշնակիցներէն Ռուսիայէն « ու Բրուսիայէն կը բաժնէր . . . » :

Աէրովինուանի աս զարմանալի հակասութեան պատճառը դիւրին է գուշակել : Ինք Գերսևանացի նաչրեւասէր մ'է և բնական է որ չ'ներէ Թաթիւրանի ձեռք առած այն հանձարեղ միջոցներուն որանց շնորհիւ , Գերսևանիոյ քաղձանայ հակառակ , Գաղղիոյ անկախ և առաջին կարգի տէրութիւն մը կը մնար , այլ հանդերձ այնու Գերսևանացի պատմարան մ'է , և ուսուցիչ պատմութեան , չ'կրնար ստել և դէպքերն այլայլել : Իր Թաթիւրանի վրայ գրած բոլոր պարբերութեանց մէջ իր դատողութիւնն իր դժացմանց կը բաղխէ , և գողցես իր անկողմնասիրութիւնն իր հայրենասիրութեան հետ կը կռուի :

Բայց այն հակասութիւնը զ'որ մենք մատնանիչ կ'ընենք , ճշմարտութեան նոր փայլ մը կուտայ և պատիւ կը բերէ Թաթիւրանի , ըստ որում վարպետ կերպով և սքողեալ գովեստ մ'է որ իրեն ոչ նը



արատուոր հեղինակի մը բերան ևս առաւել նըշա-  
նակութեան արժանի կ'ըլլայ :

Թաղերան՝ ազատեց զ'հայրենիս , Պարսոսներն  
'ի գահ հանեց , ծերակոյսը Լուի ԺԸ ի կողմ որ-  
սաց : Այն օրը՝ յորում իր գործունէութեան և  
բնատուր ճրից միջոցաւ աս գործերը կատարեց ,  
այն օրը՝ իր կենաց ամենէն գեղեցիկ օրն էր :

Թաղերան՝ կղերէն զատուեցաւ , յեղափոխու-  
թեան դէմ մեղանշեց , Նարսէսնէն հեռացաւ ,  
ոյլ ընդ միշտ իր հայրենեաց հաւատարիմ մնաց :

Ալեխէր՝ Բրուսիացի մարաջախտը կ'ուզէր Են-  
նայի (1) կամուրջը կործանել , որ Բրուսիոյ պար-  
տութեան յիշատակ մ'էր : Թաղերան՝ խնայաւ և  
Պէօնեօ կոմսին աղաչեց որ մարաջախտին ներկայա-  
նայ և ըսէ իրեն թէ թագաւորը (Լուի ԺԸ) աս  
գործէն խիտ մեծ դժգոհութիւն կ'իմանայ : Կամար՝  
իր պաշտօնին մէջ յաջողեցաւ և Թաղերանին պատ-  
մեց թէ կամուրջը պիտի ազատի : Թաղերան՝ այն  
ատեն լրագրաց մէջ հրատարակել տուաւ թէ Լուի  
ԺԸ . սպառնալիք ըրած էր Ալեխէրի , Եննայի կա-  
մուրջին հետ մէկտեղ օդն ելլելու եթէ զ'այն կոր-  
ծանելու դիտաւորութենէն ետ չ'կենար : Թագաւո-  
րը՝ որ աս դիւցադնական խօսքին և ոչ մէկ բան

---

(1) Նարսէսն Ա. Եննայի մէջ Բրուսիոյ յաղթած էր , և ի  
յիշատակ այս յաղթութեան Փարիզոյ մէջ Սեն գեաին վրայ աս  
կամուրջը կառուցեր էր :



արասանած էր, դարմացաւ իր քաջութեան վրայ, և ինչպէս դիւրին է մակարերել, սուտ չհանեց զՊաղէրան, որ իր չըսած մէկ բառով զ'ինքը ժողովրդեան սիրելի կ'ընէր:

Պաղէրան՝ երկար ժամանակ պաշտօնի վրայ չ'կեցաւ: Պազաւորէն աւելի թաղաւորականք՝ չ'էին կրնար հաշտ աչօք նայիլ իրեն որ իրենց կուսակցութեան այնչափ մեծ ծառայութիւններ մատուցել էր. թաղաւորն ալ՝ զ'ինքը որչափ սիրէր, որչափ իրեն պէտք ունենար, կարող չ'էր զՊաղէրան իր կուսակիցներուն դէմ պաշտպանել, պաշտպանել այն մարդը՝ որ կրցած էր զՔաղղիս բոլոր Եւրոպայի դէմ տուանձին պաշտպանել:

Պաղէրան՝ խոհեմութիւն սեպեց իւր հրաժեշտին բուն սրտձառները ծածկել և դաշնակցաց հետ դաշնադրութիւն չ'ստորագրելու պատրուակաւ գործերէ քաշուէցաւ:

Պազաւորը զ'ինքը վարձատրեց հարիւր հազար Ֆրանք թոշակ կապելով և մեծ — սենեկապանի տխարաբար տալով իրեն:

Տասն և հինգ տարի շարունակ ինքզ'ինք անգործութեան դատապարտեց և դուն ուրեք իր ձայնը կը հնչեցնէր: Միայն սեպուհներու խորհրդարանին մէջ՝ որուն անգամն էր, Սպանիոյ պատերազմին դէմ բողոքեց (1823) և ազդու կերպով մամլոյ ադատութիւնը պաշտպանեց:

Պաղէրան՝ իր յատկաւ թուլ ընդդիմութիւն մը



կ'ընէր Պուրայօնեանց վարչութեան , որք իր բարձր  
անկախութեան չ'էին սրտասխանէր , բայց կայս-  
րութեան արիւնասէղ սխառերազմներէն և օտարաց  
Գաղղիա արշաւելէն վերջը՝ հարկաւոր եղած էին :

Ս.ՄԼ 1830 ին Գաղղիա՝ իր թմբութենէն պիտի  
արթննար , և Պուրայօններու կրտսեր ճիւղէն մէկն  
իրեն վեհաստեա ընարեր դարձեալ Թալէրանի գոր-  
ծունէութեամբ :

## Ը.

### ԹԱԼԷՐԱՆ ԵՒ ԼՈՒԻ-ՑԻԼԻԲ

« Բախար՝ կ'ըսէ սատանորդին Մարիամէլ (1)  
« կը նմանցնեմ արազընթաց գետի որ դուրս կը գե-  
« դու , դաշտերը կ'ուռոցէ , ծառ ու տուն կը տա-  
« պալէ , մէկ կողմէն հողը կը վերցնէ , միւս կողմը  
« տանելու համար , ամէն մարդ իրմէ կը փախչի ,  
« ամէն մարդ իր կատարութեան առաջքն կը խո-  
« նարհի առանց ընդդիմութեան փորձ մ'ընելու .  
« և թէպէտ այս այսպէս է , սակայն մարդիկ ան-  
« դամ մը անդորրը հաստատուելէն վերջը անոր ա-  
« ռաջքը կ'առնեն , այնպէս որ եթէ գետը նորէն

(1) Մարիամէլ , « Լ. Երէն » . Գեղք ԺԵ :



» դուրս գեղու, կ'ատիպուի ջրմուղի մէջ հոսելու և  
 « իբր բռնութիւնը ո՛չ այնչափ աստերասան է, ո՛չ  
 « ալ այնչափ վտանգաւոր: Բախտն ալ այսպէս է.  
 « իր բոլոր դորութիւնը կը ցուցնէ հոն ուր կարգա-  
 « ւորեալ ընդդիմութիւն մը չ'դանէր, և բոլոր իր  
 « կատաղութիւնն այն կողմը կը դարձնէ ուր զ'ինքն  
 « ամփոփելու թուամբեր չ'կան »:

Թէև Մաքիաւել նենգութեան հետամուտ կ'ե-  
 րևայ, թէև սիրելի հեղինակ մը չ'է, բայց իր սա-  
 խօսքերը փորձառական փիլիսոփայութիւն մը կը  
 պարունակեն, որուն կատարելապէս հետևած է  
 Թալէրան:

Մաքիաւել կը պնդէ թէ բախտը՝ մեր գործոց  
 կէսին միայն կ'իշխէ, և զ'մեզ ազատ կը թողու.  
 միւս կէտը մեր դիտցածին պէս անօրինելու: Թալէ-  
 րան՝ սա սկզբունքը ՚ի գործ դրած է ամէն ժամա-  
 նակ, մանաւանդ երբ ձախտղութիւնը զ'Պաղղիա  
 վտանգի մէջ կը դնէր:

Աս սկզբունքը կ'ուսուցանէ ընդդէմ բախտին  
 արտաքոյ կարգի միջոցներու դիմել:

Աս սկզբան հետեանքը խարդաւանք ընել չ'է,  
 խարդաւանք քակել է, նենգութիւն չ'է, խահեմու-  
 թիւն է: Թերևս Մաքիաւել իր դրած խօսքերը  
 Թալէրանի պէս չ'էր ըմբռնէր: Թալէրան ընդհակա-  
 ռակն դիտցած է զ'անոնք այնպէս գործադրել որ  
 ձախտղ պարտղաններու մէջ չ'ընթի, և յաջող  
 դէպքերէն օգուտ քաղէ:



Թաղէրան՝ ոտոյդ է որ Լուի—Ֆելիքի գահակալութեան օգնեց այլ Պուրպօններուն երէց ճիւղը տապալելու ջանք չ'ըրաւ :

Նարոյէոն Ս. նոյն անկումը՝ իր անեցուն փառասիրութեան արդիւնքն էր , և Վարուդոս Ժ. ին գահ'ընկեցութիւնը՝ իրաց բնական հետեանքը :

Վարուդոս Ժ. երորդ իր ժամանակին պահանջմանց հասու չ'էր , վարչական ընտիր միջոցներու չ'էր դիմէր , ազգին բնութիւնը չ'էր ճանչէր , և վերջապէս անանկ ընթացք մը կը բռնէր , որ տրտունջները դժգոհութեան , դժգոհութիւնը վտարանջութեան և վտարանջութիւնը յեղափոխութեան փոխուեցան :

Իր պաշտօնեան Բօլինեաք՝ աս յեղափոխութեան վրայ ատենէ մը վերջը այսպէս կը խօսէր . « Բէսպքը հաստատեց թէ ասրատամբութիւնն ամէն կողմ « յանկարծակի տեղի ունեցաւ . . . » : Ստուգիւ « չ'եմ կարծեր որ ամենէն աւելի դժոխացին ողին « կարենայ մէկ օրուան մէջ այսպիսի փոթորիկ մը « պատրաստել ու յարուցանել » :

Աս փոթորիկին մէջ Թաղէրան՝ ուղեց անդորրը հաստատել , բարեկարգութիւնը պահել , և յեղափոխութիւնն իրաւադիտութեան առջին արդարացրնելու համար Վարուդոս Ժ. երորդին թաղը օրինաւոր միջոցներով Լուի—Ֆելիքի գլուխը դնել :

Աս Յեղափոխութեան երրորդ օրը Թաղէրան՝ իր մասնաւոր քարտուղարը (Մ. Բօլմաշ) կանչեց



և ձեռքը թուղթ մը յանձնելով, « գնա՛ ըստ Տի-  
կին Ստեղծիտը (քոյր Աուի—Յիլիբի) գտիր, որ և  
է միջոցաւ ներկայացիր իրեն, աս թուղթը տուր, և  
երբ կարդայ ապահով եղի՛ր որ կը պատուէ, և կամ  
նորէն ինձ դարձուր, երբ Տիկինն այս թուղթը կար-  
դայ, ըսէ՛ իրեն թէ պէտք է՛ ժամանակ կորսնցնել:  
Օրիշանի գուքսը (Աուի—Յիլիբ) պէտք է վաղը հոս  
ըլլայ, և մի միայն քաղաւորութեան շնորհակալութիւն—Տե-  
ղակալի տխուրոսն ընդունի: Մնացածը նորէն կը  
գործադրուի »:

Թալէրանի գրութիւնը պարզապէս սա բառերէն  
կը բաղկանար:

Տիկինը՝ կրնայ առէն կերպով վատան ըլլալ գրա-  
շերիս, որ քաղաւորութիւն է:

Ամէն բան ճիշդ այնպէս կատարուեցաւ ինչպէս  
Թալէրան գուշակէր ու պատրաստէր էր: Թալէ-  
րան՝ Աուի—Յիլիբը կ'ընտրէր, վասն զի հասարա-  
կապետութիւնն ալ տեսէր էր, և փորձառութիւնը  
չ'էր ներէր իրեն վարչութեան այն ձևին դիմելու  
որուն հաստատութիւնն իրեն անկարելի կ'երևար:

Աուի—Յիլիբ՝ դ'Թալէրան Աօնտրայի Գաղղիա-  
կան դեպքան անուանեց: Գաղղիական լրագիրք  
սկսան Թալէրանի վրայ իրենց հին ամբաստանու-  
թիւնները նորոգել, և Անգղիոյ թերթերն աս չա-  
րակամ գրոյցներուն արժեք կոտային, վերջապէս  
չտեսերն ալ կը նախանձէին Թալէրանի վրայ որ իր  
ընտրած վեհապետը ներկայացնելու կ'երթար, և



դ'ինքն ամէն կերպով կը դրապարտէին :

Բայց Լօր—Հօվարդ և Ռէպինկիթընի դուքսը խիստ լաւ պաշտպանեցին զ'Թալէրան :

« Բարձրաձայն կը յայտնեմ ըստ Ռէպինկիթընի « դուքսը՝ թէ 1814 էն 'ի վեր քանի որ Պէնէվէնզի « իշխանին (Թալէրանի) հետ գործ ունեցայ, բանակ « ցեցայ, զ'ինքն այնչափ արդարասէր դատայ որչափ « ճարտար » :

Մեծին Բրիտանիոյ մէկ նշանաւոր պաշտօնէին աս վկայութիւնը Թալէրանի ամէնէն մեծ ներբողն է, և զ'ինքը դրապարտողներուն դէմ ազդու, ամէնէն ազդու պատասխան :

Լօնտրա դեսպան եղած միջոցին Թալէրանի տեսած ամէնէն մեծ գործը Պէլճիգայի խնդրոյն մէջ ունեցած մասնակցութիւնն է :

Ստորին—Նահանգաց ժողովուրդը՝ երկու մաս կը բաժնուի, մին Աթիոլիկ, միւսը Բողոքական, մին՝ ճարտարութեան հետամուտ, միւսը վաճառականութեան յաջողակ. մին կը բնակէր Երկրին այն մասին մէջ, որ Պէլճիգա կը կոչուի, և միւսը աւելի դէպ 'ի հիւսիս Հողանտայի մէջ :

Բախտը՝ զ'անոնք ժամանակ մը քաղաքականապէս միացուցեր էր, այլ կրօնի, լեզուի, սկզբանց և բարուց տարբերութիւնը՝ զ'իրենք պիտի բաժնէր :

Պէլճիգայիք՝ 1830 օգոստոս 23 ին ընդհանուր ապստամբութիւն մը յարուցին : Հողանտայի գընդերը չ'կրցին զ'այն նուաճել, և Սնդղիա, Սւատ-



րիա , Բրուսիա , Ռուսիա որք աս երկիրներուն  
միացեալ—քաղաքաւորեալսն կազմութեան նպաստէր  
էին , յուզուեցան :

Լուի—Տիւր' Պէլճիգացոց կողմնակից էր , տը-  
կարացնելու համար Ստորին—Նահանգաց զօրու-  
թիւնը , որ Տրանսայի սպառնալիք մ'էր : Ընդհա-  
կառակն Բրուսիոց թագաւորը որ խնամի էր Հոլան-  
տայի թագաւորին , այս վերջնոյն օգնել կ'ուզէր :

Գաղափարաց և շահերու տարբերութիւն մը  
քիչ մնաց աս երկու մեծ տէրութեանց մէջ անանկ  
սպառերազմ մը պիտի յարուցանէր , որուն օրինա-  
կը այսօր կը տեսնենք :

Սահայն տէրութիւնք' դեսպանաժողով դուսա-  
րեյին 'ի Լօնտրա , յ'որում Թալէրան' զ'Գաղղիա  
կը ներկայացնէր : Այս Եւրոպական արխաղազասին  
մէջ հռչակաւոր քաղաքազէտը' Եւրոպական տէրու-  
թեանց մեծ մասն իրեն հետ միացուց . և վերջա-  
պէս Պէլճիգայի անկախութիւնը որոշել տուաւ :

Աս պարագան' 1815 ի գաշնադրութիւններուն  
դէմ զանցառութիւն մ'էր , այն գաշնադրութիւն-  
ներուն' որ զ'Գաղղիա նուաստացուցիչ դիրքի մը  
մէջ կ'ամփոփէին , որոց դորձադրութիւնը Թալէ-  
րան չ'էր կրնար ժամանակին արդիլել , և զ'որ աս  
տութիւ ջնջելու փորձ մը կ'ընէր :

Աս էր Թալէրանի վերջին քաղաքադիտական  
դորձը և կ'ուզէր իր ասպարիզն' աս փառաւոր ձեռ-



նարկութեամբ կնքել : Ուստի , հրաժարեցաւ ՚ի  
դեասպանութենէ և բոլորովին քաշուեցաւ :

Թ .

### ՎԵՐՁԻՆԻ ԹԱԼԷՐԱՆԻ

Թաղերան՝ առանձնական կենաց մէջ մտնելով՝  
տակաւին չ'էր դադրէր Լուի—Ֆելիքի խնաստուն  
խորհրդականն ըլլալէ :

Ստոյգ է որ պաշտօնապէս դործ մը չ'ունէր ,  
բայց ամէն դործոց կերպով մը միջամուխ կրնար  
համարուիլ , ըստ որում միշտ իր կարծիքը կը հար-  
ցընէին :

Թաղերանի կեանքը՝ ազգի մը կէս դարու կենաց  
հետ կապուած էր : Ինք՝ տեսած էր բոլոր այն շքե-  
շանները՝ որոցմէ ազգ մը կրնայ անցնիլ :

Տեսած էր իր հայրենեաց գրոշակներուն օտար  
երկրի մայրաքաղաքաց վրայ ծածանիլը , և նմանա-  
պէս օտարաց յաղթանակաւ Փարիզ մտնելը , թա-  
ղաւորի մը դժխատումը , ուրիշ վեհապետի մը ան-  
կումը , կրօնին բարձունն ու վերահաստատութիւնը ,  
ժողովրդեան կատաղութիւնը , կայսեր մը լուծը .  
տեսած էր հաւատարապէս անխիստանութիւնն ու բըռ-  
նութիւնը , և իր բոլոր տեսածին կատարելապէս



մասնակից եղած էր : Աւ իրեն գործ չ'կար , ուստի  
և փութայ իր քաղած դափնիներուն շուքը հանդչիւ :

Իր գեղջկային օթեանէն՝ Ասկեռն անուն բարե-  
կամին գրած նամակին մէջ իր սուանձնութեան  
սրատճառները պատէս կը բացատրէ :

« Չ'կարծէք որ քմածին յօժարութիւն մը (քար-  
« րիս) զ'իս ստիպեց գործերը ձգելու : Գործերն այն  
« ատեն թողուցի , երբ աւ գործ չ'կար : Ա'ուղէի  
« որատերազմին առաջքն առնել , կը կարծէի որ  
« Գաղղիսա Սնգղիոյ հետ կապուելով զ'այն անկա-  
« րելի կ'ընէ . 1830 Յուլիս ամսոյ յեղափոխութեան՝  
« Եւրոպայի քաղաքացութեան իրաւունք տալ կը  
« ջանայի , կ'աշխատէի որ աշխարհ ապահով ըլլայ  
« թէ՛ մեր վարչութիւնը դադարաց տարածման  
« հետամուտ չ'է : Բոլոր ասոնք կատարուեցան ,  
« աւ ի'նչ կը մնայ ինձ ընելու . . . : Իմ հասակիս  
« մէջ մարդ գլխաւորաբար յիշատակու կ'ապրի » :

Երբ այս զգայական նամակը Ասկեռնի հաղոր-  
դեցին , « ճշմարիտ է գոչեց , այն առածը որ կ'ը-  
սէ , » թէ սատանան երբ ծերանայ , ճգնաւոր կը  
դառնայ » :

Թայէրան՝ Սնգղիայէն վերադարձէն 'ի վեր ոտ-  
նացաւ մը կը նեղուէր : Իր հիւանդութիւնն այնչափ  
ծանրացեր էր որ վիրարութեան գործողութիւն  
հարկ եղաւ : Սակայն չ'կրնարով ցաւի դիմանալ  
տենդ մը բռնեց զինքը , և ողբվար ձգեց :

Լուի-Յիւլիք փութայ Թայէրանի այցելութիւն



մ'ընեւ , և տեսաւ որ հարպիկ պաշտօնեան չ'էր  
յաջողած դ'մահ խաբել :

Թալէրան' իր տկարութիւնն առ ոչինչ գրելով  
անկողնոյն մէջ նստաւ իր արքունի հիւրն ընդունե-  
լու համար , և մինչև անդամ մահուան հետ կրու-  
ուած տունն յաջողեցաւ մեծարանք մ'ընել թա-  
գաւորին :

« Ահա Կաթա՛ն Տէր' ըսաւ իրեն' այսօր մեր տունն  
անանկ պատիւ մ'ընդունեցաւ , որ արժանի է մեր  
տարեգրութեանց մէջ անցնելու , և դոր իմ յա-  
ջորդներս պարծանօք ու երախտադիտութեամբ պի-  
տի յիշեն » :

Երբ թողաւ որը մեկնելու վրայ էր , Թալէրան  
փութայ բոլոր դ'ինքը շրջապատողները Նորին Ահ-  
հափառութեան ներկայացնել , իր բժիշկը , քար-  
տաղարը և մինչև անդամ իր սենեկապանը :

Թագաւորին մեկնելէն վերջը մահը կուգար Թա-  
լէրանի բեղմնաւոր կենաց վերջ տալու , և 1838  
Մայիս 16 ինդերեղման կը մտնէր այն քաղաքադէտը  
որ 1754 ին աշխարհի լոյսը տեսած էր , ամէն միճա-  
կէ անցնելով , բոլոր անոր հրապոյրները վայելելու ,  
և դառնութիւններն ղդալու համար :

## ՎԵՐՋՍԲԱՆ

Մինչև հոս ուղեցինք Թալէրանի քաղաքակա՛ն  
կեանքն ամփոփել :



Թալէրան՝ գողցես աշխարհ Մ'է, որուն վրայ  
անհամար հետազօտութիւնք կ'ըլլան, և զ'այն նկա-  
րագրելու հատորներ պէտք են :

Սակայն մեր այս տեսութիւնը՝ որչափ կարճ ըլ-  
լայ, կարծենք կը բաւէ նկարելու այս մեծ մարդը,  
և անոր յատկութիւններն այնպէս որոշակի ներկա-  
յացնելու, ինչպէս հատուածաւոր ճնշին ապակիի մը  
կտորը զ'տիեզերք լուսաւորող արեգական ճառա-  
գայթները յ'ինքն կ'ամփոփէ, և անոնց ճշմարիտ  
գոյները ցոյց կուտայ :

Արդ՝ այս տեսութիւնը կատարեալ ընելու հա-  
մար, չորս դատ զլուխ ալ կը նուիրենք . Թալէրա-  
նի սրատրաստաբանութեան, անոր վրայ եղած դա-  
տողութեանց, իր ըրած գուշակութեանց, և իր եր-  
կու ճատերուն, զ'որ դատ յաւելուածի մը մէջ կը  
գետեղենք :





ՅԱԻԼՈՒԱԾ

Ա.

ՍՈՍԾՔ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹՎԷՐԱՆԻ

Եստ նշանաւոր խօսքեր կան, զոր Թալէրանի  
կ'ընծայեն, բայց քիչերն իրենն են:

Թալէրան՝ պերճասոս չէր, իր գլխաւոր դէնքերն  
պատրաստարանութիւնն ու այն խօսքերն էին, որք  
առած դարձած են:

Մենք կ'ուզենք անոնցմէ գլխաւորներն մէջ բե-  
րել:

Թալէրան՝ սովորութիւն ունէր ըսելու թէ խօսքը  
մարդու տրված է իր միտքը ծածկելու համար: Փի-  
լասօսը՝ կ'ըսէ թէ խօսքը մարդու տրված է իր դի-  
սաւորութիւնը յայտնելու համար:

Լա Ռօշ — Այն յօն անուն կարդինալը որ տղեր  
ու տղէտ մարդ մ'էր, որ մը սեղանի մրայ Տիկին  
Սթաէլի և Տիկին Ռէքամիէի մէջ տեղ նստած էր,  
որոց առաջինը խիտ խելացի էր, և երկրորդը շատ  
գեղեցիկ: Երբ Թալէրան սենեկին ներս մտաւ, կը  
տեսնէր, ըսաւ իրեն կարդինալը, հանձարի և գեղեց-  
կութեան մէջ մնացի: Այո՛, պատասխանեց Թալէ-  
րան, բայց առանց երկուքն ալ ստացած ըլլալու:

Սնդամ մը Թալէրան իր պաշտօնակցայ հետ  
Նարոյէօն կայսեր քով գացեր էր խորհրդակցելու:



Խորհուրդը՝ շատ երկար տևէր էր և պալատականաց հետաքրքրութիւնը կը շարժէր : Երբ Թալէրան գուրս ելաւ, անխոհեմ սենեկապան մը մօտեցաւ իրեն և ըսաւ, « Տէ՛ր Իշխան, այսօրուան խորհրդադին մէջ ի՞նչ անցաւ », — « Չորս ժամ անցաւ », պալատականաց Թալէրան առանց դժգոհութեան նըշան մը ցոյց տալու :

Կարողոս Ժ. Թալէրանի ըսաւ թէ թագաւոր մը որ իր ժողովուրդէն սպառնալիք կը կրէ, պէտք է կամ գահն ընտրէ կամ կախաղանը : — « Տէ՛ր, պալատականաց իրեն Թալէրան, Չեր Աւհախառութիւնը՝ ճեպակառքը կը մտնայ » : Իրօք Կարողոս Ժ. ատենէ մը վերջը ստիպեցաւ ճեպակառքով գահը ձգել հեռանալ :

Թալէրան Արիչներուն (տիրէթուար) պաշտօնէութիւն ըրած ատեն շատ պարտք ունէր, մինչեւ անգամ իր կառքին գինը վճարած չ'էր : Պարտապահանջն՝ իրեն ներկայացաւ երբ ինք կառք կը նստէր : Թալէրան դձայն տեսնելով՝ պէտք է որ ըսաւ Չեզի վճարեմ : Բայց ե՞րբ ըսաւ մարդն անհամբերութեամբ : Ա՛ սիրելի պարոն պալատականաց Թալէրան, որչա՛փ հետաքրքիր էք և հրամայեց կառավարին որ ճամբան շարունակէ :

Գեորգ Գ. Անդղիոյ թագաւորին մահուան լուրը Փարիզու մէջ շատ տարածուէր էր, և որովհետեւ այն ժամանակ Գաղղիոյ և Անդղիոյ յարաբերութիւններն աղէկ չ'էին, աս տարածայնութիւնը



քաղբին պօրապին վրայ մեծ աղղկցութիւն ունէր ։  
 Սեղանաւոր մը՝ որ գործով քանի մ'անգամ Թա-  
 լէրանի հետ տեսնուէր էր՝ համարձակեցաւ արտա-  
 քին գործոց պաշտօնատունն երթալ և հարցնել ի-  
 րեն թէ արդեօք աս լուրն իրա՞ւ է ։ Թալէրան քա-  
 ղաքավարութեամբ ընդունեցաւ ղ'ինքը և ծանրու-  
 թեամբ պատասխանեց « ոմանք կ'ըսեն թէ Սնդդիոց  
 « թագաւորը մեռած է , ուրիշներն ալ կ'ըսեն թէ  
 « կ'ապրի . ըստ իս , ո՛չ անոնց ըսածին կը հաւատամ ,  
 « ո՛չ ասոնց . ասիկա ձեզի խորհրդարար կ'ըսեմ ,  
 « բայց մարդու մ'ըսէք , և իմ անունա ալ մի տար » ։

Երբ Թալէրան՝ իր առաջին դեսպանութենէն  
 դարձաւ , Նարոյէօն Ս . հարցուց իրեն թէ Հիւսի-  
 սային տէրութիւններու արքունեաց մէջ ի՞նչ կար-  
 ծիք կայ իրեն վրայ ։ « Տէ՛ր , ըսաւ իրեն , հանձարեղ  
 պաշտօնեան , ոմանք կ'ըսեն թէ չապտուած մ'էք ,  
 և ոմանք ալ սատանայ ։ Բայց ո՛չ որ ղ'Ձեզ մարդ  
 կը կարծէ » ։

Ետժօպրիան երևելի բանաստեղծը՝ իր Մարտի-  
 րոսք անուն գործը Նարոյէօն Ս . նոյն օրն հրատա-  
 րակեց ։ Փարիզու մէջ այս գիրքն 'ի սիրբան այնչափ  
 մեծ ընդունելութիւն գտաւ , որ ամէն մարդ իրարու  
 ձեռքէ կը յափշտակէր ։ Թալէրան՝ որ մտլեռանդ հե-  
 ղինակին վրայ շատ համարում չ'ունէր , դեռ այս  
 գիրքը չէր կարդացած ։ Հետաքրքրութենէ շարժեալ  
 Ետժօպրիանի Ծօնդան անուն բարեկամին հարցուց  
 թէ գրքին նիւթն ի՞նչ է ։ Ս . յն ատեն Ծօնդան՝ ե-



աանդադին աշխուժիւ սկսաւ Մարտիրոսաց համառօ-  
տութիւնն ընել և պատմել թէ ինչպէս Եւզորա և  
Սիմօթ' ոսէ կրկէսին մէջ անասուններու ճարակ կ'ըլ-  
լային : Այսինքն ըսաւ Թալէրան' ճիշտ առ գրքին  
բախտն ունէիք :

Թալէրանի պատրաստարանութիւնը՝ միշտ կ'ծու-  
չէր : Երբեմն աղնիւ զգացումներ բացատրելու և  
գովելու համար ալ բառեր կը գտնէր :

Մօնպրէօն զօրապետը՝ Թալէրանի տունը ճաշի  
հրաւիրեալ ըլլալով , քիչ մը ուշ հասաւ , և սկսաւ  
թողութիւն խնդրել : « Հոգ չ'է , սիրելիդ իմ զօրա-  
պետ , գոչեց իրեն Թալէրան , ամենէն վերջն ե-  
« կարք դուք , վասն զի պատերազմի դաշտը հրաւիր-  
աւած չ'էիր , այլ ճաշելու : Թէոր պատերազմի հրա-  
«ւիրուած ըլլայիր , սիրելիդ իմ Պայար , ամենէն ու-  
«ռաջ կը գտնուէիր :

Օր մը մէկը խնդրեց Թալէրանէն՝ որ Վօտիօն  
իշխանուհւոյն բնակարանը ցուցնէ իրեն : « Սէն-Լա-  
զար փողոցը կը բնակի , պատասխանեց Թալէրան՝ իսկ  
տանը թիւը չ'եմ գիտէր , թաղին աղբատներուն  
հարցուր » : Աս խօսքով կ'ուզէր իշխանուհւոյն գը-  
թաբտութիւնն ու առատածեռնութիւնը գովել , որ  
թշուառաց բարեկամահին էր և աղբատաց նեցուկ :

Թալէրան Անէվէնդի իշխան անուանած ըլլա-  
լով , խումբ մը շողորթիների բոլորաթիբը պար ա-  
ռած կ'ուզէին գ'ինքը շնորհաւորել . « Տէ՛ր Աստ-  
ուած ըսաւ , Պարունե՛ր , ի՞նչ կ'ընէք , շնորհաւորու-



Թեան տեղը հոս չ'է, դայէ՛ք Տիկին Թաղերանին  
 յայտնեցէք ձեր ուրախակցութիւնը, վասն զի կա-  
 նայք շատ կ'ուրախանան երբ իշխանութի կ'ըլլան » :  
 Չ'կար ուրիշ խօսք մը որ աս խօսքին չափ ազդու  
 ըլլար շնորհաւորիչներու ձանձրութենէն ազատելու,  
 միանգամայն վատքն արհամարհելու համար այնպի-  
 սի եղանակ մը՝ որուն անկեղծութեան վրայ ո՛չ որ  
 ապրակուսի :

Նարօյէոն Ս. որ մը զ'Թաղերան յանդիմանելով  
 ըսաւ, « թերեւս կարծէք որ եթէ ես մեռնիմ դուք  
 « յանձանձիչ խորհրդոյ մը նախադատէ կ'անուանիր . . . ,  
 « կը սխալիք չարաչար, թէ որ ծանր և վտանգաւոր  
 « կերպով հիւանդ ըլլամ յայտնապէս կ'ըսեմ ձե-  
 « ղի, դուք քան զ'իս առաջ պիտի մեռնիք » : —  
 « Տէր, պատասխանեց Թաղերան, մեծ շնորհ մը ըն-  
 դունող մարդու մը դէմքով, Տէր, այդպիսի աղ-  
 դարարութեան մը կարօտութիւն չ'ունէի, ջերմ ա-  
 դօթքներ ուղղելու համար Սատուծոյ, որ ձեր Ա.ե-  
 հախառութեան օրերը սրահէ » :

Լուի ԺԸ. պատրաստարան վեհապետ մ'էր :  
 Ուղեւոր Թաղերանի ընթացքը սրախտրակել, որ  
 ամէն տեսակ վարչութեան ծառայած էր, « կը  
 « հիանամ, ըսաւ իրեն, ձեր Պաղղիոյ դարձերուն վը-  
 « րայ ունեցած ազդեցութիւնը դիտելով : Ի՞նչպէս  
 « ըրիք որ նախ վարչութիւնը, և վերջն ալ Պօնա-  
 « բարթի հսկայական իշխանութիւնը տապալեցիք » :  
 « Սատուած իմ պատասխանեց Թաղերան, ես քան



« մը չ'ըրի : Չ'եմ գիտէր ինչ անբացատրելի ողի մը  
 « կայ յ'իս , որ ճախորդութիւն կը պատճառէ այն  
 « վարչութիւններուն՝ որք ինձ խնամով չ'են նայիր » :

Թալէրան՝ լսելով որ իրեն յաջորդող անյաջող  
 պաշտօնեաները կը գովէին և կըսէին թէ զ'Պաղղիս  
 պիտի ազատեն , « զարմանալու ին՞չ կայ ըսաւ , սա  
 գերն ալ զ'Կապիտօլ ազատեցին » :

Թալէրան՝ Քիւլիէ հռչակաւոր բնասպառումին  
 հետ հետեւեալ խօսակցութիւնն ունեցած է :

« Քիւլիէ սեպուհներու խորհրդարանին մէջ օրի-  
 նայ ծրագիր մը կը ներկայայնէր հին պաշտօնէից  
 'ի նպատ : Նիստն աւարտելէն վերջը Թալէրան  
 ըսաւ , « զրաւ կը դնեմ որ դուք Եւրոպայի առա-  
 ջին բնասպառումը՝ դուք չ'էք գիտէր թէ անասու-  
 ներուն մէջ ամենէն երախտագէտները որո՞նք են :

— Ձեր բարձրութիւնը պատասխանեց Քիւլիէ ,  
 կարծեմ կատակ ընել կուզէ :

— Ա՛չ ո՛չ լրջաբար կը խօսիմ .

— Չ'եմ գիտեր . . .

— Չ'ե՞ք գիտեր , թէ որ այդպէս է , ըսեմ ձեզի ,  
 անասնոց ամենէն աւելի երախտագէտները հնդկահա-  
 ւերն են : Եամանակաւ ճիզութիւնները զ'անոնք Պաղ-  
 ղիս բերին , և հիմա իրենք զ'ճիզութիւնները Պաղ-  
 ղիս կը քաշեն :

Թալէրան՝ անգամ մը յարքունիա դռնուելով՝  
 ուշի ուշով պաշտօնատէրի մը կը նայէր , որ իր այժե-  
 ման նման բարակ նիհար ոտքերուն քովին երկար



Թուր մ'էր կախէր : Մէկը՝ հարցուց իրեն թէ զ՞ով  
 էր դիտէր . « կը տեսնէք որ սլառասխանեց Թալէ-  
 րան՝ մեծ տարակուսի ու տաղնապի մէջ եմ , վասն  
 զի չ'եմ կրնար որոշել թէ դիտած սրաչոփնա-  
 տարա Պ . Յ , . . երեք սրունք մի ունի՞ , թէ երեք  
 Թուր է կախեր » :

Բ .

### ԿԵՆՍԱԳԻՐԻ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԻ ԹԱԼԷՐԱՆԻ

Քերթողները իրենց քնարն ըստ մեծի մասին  
 ծաղկանց թագուհւոյն կը նուիրեն , ըսել կ'ուզեմ  
 վարդին : Կենսագրաց շատերն ալ իրենց գրիչը  
 քաղաքադիտաց իշխանին նուիրած են , այն է Թա-  
 լէրանին :

Գողցես Թալէրանի ընթացքը հանելուկ մ'է ,  
 զոր խրաքանչխր կենսագիր տարբեր կերպով կը  
 մեկնէ :

Թալէրան՝ 'ի մէջ այլոց վերջերս երկու դվսաւոր  
 կենսագիր ունենալու սրատիւն ունեցած է , մին՝  
 Սէնդ — Պէօլ (1) Գաղղիացի երևելի քննադատը ,

(1) Աս գործին հեղինակը Սէնդ—Պէօլի համարում կենսագր-  
 ութիւնը գրած է , զոր երեւոյնով ժամանակին հրատարակեց



միւսը ՍԵՐ Հէնրի — Լիզզըն — Պուլլըր հռչակաւոր քաղաքապետը որ ատենօք Բարձրագոյն Գրանքով դեօպան էր մեծին Բրիտանիոյ :

Պուլլըրի Թալէրանը՝ Սնդդիայի քաղաքապետի մը Թալէրանն է : Սէնդ — Պէօլի Թալէրանը՝ որ Պուլլըրի Թալէրանին քննադատութիւնը կրնայ համարուիլ, գրագիտի մը Թալէրանն է :

ՍԵՐ Պուլլըր՝ զՊալէրան իր ուղածին պէս կը նկատէ, և անոր հանդամանայ նկարագրին հետ դողցես քաղաքականութեան դասագիրք մ'ալ շինած է :

Սէնդ — Պէօլ՝ ընդհակառակն զՊալէրան շնորհայտներ այնպէս, ինչպէս որ էր, այլ ինչպէս որ պէտք էր ըլլալ :

ՍԵՐ Պուլլըր՝ Թալէրանի ընթացքը կը դափէ, քաղաքապետի մը ճշմարիտ նկարագրին ընելով, և հեռեւեալ սքանչելի տողերուն մէջ քաղաքապետական վարդապետութիւն մը կը յօրինէ :

« Վայրկեաններ կան, որ զանազան դէպքեր  
 « պարագայից բազմապատիկ զօրութիւններէ մղեալ  
 « որք ամէնքն ալ մի և նոյն նպատակին կը հասնին,  
 « յառաջագոյն անհրաժեշտ կերպով որոշուած վրձն  
 « ռուած են, և այս վայրկեաններուն մէջ մինչդեռ  
 « տգէտը՝ կը յամառի և կամակոր կը մնայ, մինչ  
 « դեռ գոտարը՝ իր հաստատարութեան վրայ դար  
 « մանք կը սրտոնառէ, մինչդեռ քրիստոնեան զը  
 « լուխ կը ծռէ և կը ծռւթկայէ, քաղաքապետ մար



« դը՛ ինքդինք ստարադաներուն կը նուիրէ և բաւա-  
 « կան կը համարի ըստ կարելոյն բարիք խառնել  
 « այն չարեաց , զոր անխուսափելի կերպով ընդու-  
 « նիլ հարկ է » :

Մէնդ — Պէ՛օւլ՝ զՊաղէրան չէ կրցած հասկնալ :  
 Մէնդ — Պէ՛օւլ՝ իբրև գրագէտ — բանադատ անհա-  
 ւասարելի կ'ըլլայ երբ խօսի Ախրթոր — Հիւլօյի և  
 Լամարթինի վրայ , երբ ըսէ թէ Միւսէ իր Ռօլ-  
 լան՝ ի՞նչ ոճով գրած է , ուրիշ մ'իր գրուածքնե-  
 բուն մէջ ինչ պակասութիւն ունի , բայց քաղաքա-  
 գիտի մը կեանքը չէ կրցած ըստ արժանւոյն բա-  
 ցատրել :

Գալով Սըր Պուլլերի Պաղէրանին , Ծրանախոյր  
 Սարսէյ՝ իր մէկ քննադատական յօդուածին մէջ կը  
 հիանայ սա գործին վրայ . այլ կը ցաւի որ Մնդ-  
 դիացի հռչակաւոր քաղաքագէտը՝ սա մասին ճիշդ  
 պատմարան մը չէ եղած , ոչ ալ անկեղծ գատա-  
 ւոր :

Մենք առանց կարծեկից ըլլալու իրեն , սարսոք  
 կը համարինք Պաղէրանի գլխաւոր կենսագիրներն  
 յիշելով՝ սա մեծ անձին վրայ նշանաւոր հեղինակ-  
 ներու , և ՚ի մասնաւորի քաղաքագէտ պատմարան-  
 ներու դատողութիւնքը համառօտիւ մէջ բերել :

Մինեէ պատմարանը՝ զՊաղէրան Նարօլէօնի  
 հետ սա կերպով կը բաղդատէ :

« Նարօլէօնի մեծ հանճարը և Պաղէրանի ուղ-  
 « զադատութիւնը՝ գոգցես իրարու պակաս լեցնե-



« ըստ համար յօրինուած էին . առաջնայն՝ հնարագիւ-  
 « տական , բեղմնաւոր , անվեհեր և դայրացկոտ  
 « հանդամանքը , երկրորդին՝ ուղիղ , պարզ , պաղ և  
 « ապահովիչ յատկութեանց պէտք ունէին : Մին՝  
 « գործունէութեան ողին ունէր , միւսը խորհրդա-  
 « տութեան , մին՝ միտքը կը դնէր մեծքաներ ը-  
 « նել , միւսը՝ կ'առաջադէր վտանգաւոր բաներէ  
 « դգուշանալ . . . Թալէրանի , պէս խորհրդականի  
 « մը կորուստը թշուառութեան պատճառ մ'էր  
 « Նարոյէոնի . . . » :

Թիէր՝ Հիւսպատառաբիւն և Կայսրաբիւն գըր-  
 քին հեղինակը և Լուի—Ֆիլիբի նախորդ պաշտօն-  
 եան՝ « Թալէրան , կ'ըսէ , « բարոյական արժէք մ'ու-  
 « նէր , այն է սիրել զ'խաղաղութիւն , և ինքզինք  
 « խաղաղասէր ցոյց տալ , անանկ տիրոջ մը իշխա-  
 « նութեան տակ որ պատերազմը կը սիրէր » :

Կիտո՝ երևելի փիլիսոփայն ու քաղաքագէտը կը  
 պնդէ թէ՛ Թալէրան տազնասալի մարդ էր , այսինքն  
 իր տաղանդը միմիայն ճգնաժամի մը մէջ կրնար  
 փայլիլ : « Ա . Թալէրան կ'ըսէ նա , « Պուրպօն-  
 « եանց վերահաստատութեան ճգնաժամուն մէջ  
 « սլաղարիւն և անվեհեր խմաստութիւն մը , և ու-  
 « ղ իշներուն վրայ գերազանց առաւելութիւն մը կը  
 « ցուցնէր և քիչ մը վերջը 'ի Վիէննա , Պուրպօն-  
 « եանց տան ու Գաղղիոյ յ'Երոսպա ունեցած գոր-  
 « ծերուն մէջ՝ մի և նոյն յատկութիւններն և ուրիշ  
 « քիչ ծանօթ և ազդեցիկ ձիրքեր յ'երևան սխալի



« Հանէր » :

Շաթօսարիան բանաստեղծը՝ որ չ'էր կրցած քաղաքական ասպարէզի մէջ գտնալ այն փառքը զ'որ իւր գրիչն իրեն կուտար , չ'էր սիրէր զ'Թալէրան , և անոր վրայ պարսաւանօք կը խօսէր :

« Ենթադրեցէ՛ք զ'Թալէրան իրր խեղճ և անծա-  
 « նօթ ստակական մը որ իր անբարոյականութեան  
 « հետ մի միայն սրահներու մէջ փայլելու անուրա-  
 « նայի յատկութիւնն ունենայ , անտարակոյս այն  
 « ատեն ոչ ոք իր վրայ կը խօսի : Թող Թալէրան՝  
 « ինկած նուաստացած աղնուականը , ամուսնացեալ  
 « Քահանան և աստիճանակորոյս Եպիսկոպոսը և  
 « զած չ'ըլլայ , այն ատեն ի՞նչ կը մնայ իրեն : Իր  
 « համբաւն ու իր յաջողութիւնը այս երբեակ եղծ-  
 « մանց կը պարտաւորի » :

Վկլլըմէն՝ որ Գաղղիոյ հասարակաց կրթութեան պաշտօնէութիւն ըրած էր , հռչակաւորն Վկլլըմէն՝ այսպէս կը դատէր զ'Թալէրան :

« Պ . Թալէրան՝ երկար ժամանակ և տարբեր  
 « սրայմաններու մէջ յաջողած տէրութեան պաշտօ-  
 « նէից և քաղաքագիտաց նման , խիստ դատաս-  
 « տաններու և երբեմն դրապարտութեանց ենթակայ  
 « եղած է : Մարդիկ չ'են ներէր որ իրենց մէկ նը-  
 « մանին՝ շարունակ և յարատև յաջողութիւն մ'ու-  
 « նենայ , նա մանաւանդ երբ այս յաջողութիւնը  
 « կը տեէ մինչև անգամ պարագայից կատարեալ  
 « փոխոխման ժամանակ . . . : Մտաց յաջողակու-



« թիւնը չ'կրնալով ուրանալ, հանգամանաց վրայ  
 « կը յարձակին, և կ'ենթադրեն թէ մարդ՝ միշտ  
 « յաջողելու համար ստէպ մասնութիւն ըրած ըլ-  
 « լալու է . . . : Ըստ իրականութեան Թայէրան՝  
 » զ'ոչ ոք մատնած է, այլ չ'բռնեց զ'անոնք՝ զ'որ  
 « անդունդին եզերքը կը տեսնէր, և շուտով կը  
 « մոռնար զ'անոնք՝ որք կը գլորէին : Նենգաւոր  
 « խորհուրդ մը տալու անկարող, ուղղադատութե-  
 « նէ և ճաշակէ մղեալ՝ թշնամի բռնութեան, երբ  
 « մէկն իշխանութիւնը չարաչար գործածէր, մէկէն  
 « 'ի մէկ գործէ չէր քաշուէր : Մեղմութեամբ կը  
 « սրախարակէր, նրբամտութեամբ դէմ կը կենար,  
 « ոչ մէկէն 'ի մէկ ևս քաշուելու այլ քիչ մը դատ-  
 « ուելու համար . . . : Չերմ համակրութիւն չէր  
 « տածէր, այլ վրէժ ալ չէր սրահեր, և իր երկար  
 « ասպարիդին մէջ եթէ միշտ բարիք չ'ըրաւ, դէժ-  
 « երբէք չարը չ'քաջալերեց, ո՛չ ալ ընդդիմութեան  
 « նեցուկ հանդիսացաւ » :

Աս խօսքերուն վրայ չ'ենք ուղեր ուրիշ հեղինա-  
 կաց կարծիքն յաւելուլ, և աս դլուխն աս անկեղծ  
 ու ընտիր դատողութեամբ կը գոցենք :



Գ.

ԳՈՒՇԱԿՈՒԹԻԻՔ ԹԱԼԷՐԱՆԻ :

ՊԱՏԵՐԱԶՄ 1870 Ի :

Թաղերան՝ իր յիշատակներուն մէջ խելացի խորհրդածութիւններ ըրած է և Վիկննայի արքայաժողովին նուիրեալ էջի մը մէջ կը պնդէ թէ մեծ վտանգներ կ'ապառնան եւրոպական հաւասարակըշտութեան, որուն հիմունքն այս ժողովը դրաւ : Ըստ իր կարծեաց՝ առ վտանգներէն մին անդրածուխեան տէրութենէ մը (Սմերիկա) պիտի գայ և միւսը Գերմանիոյ կեդրոնէն :

Ահաւասիկ իր մասնաւոր խօսքերը . « Պէտք է « Եւրոպա՝ աչքերը բանայ և Սմերիկոյ վրայ հսկէ » « և տեղի չ'տայ Սմերիկոյ որ և է պարագայի մէջ « հատուցում՝ արհանջերու և ամբաստանելու » :

Գողցես Թաղերան՝ Ալապամայի խնդիրը կը դուշակէ, որ 1865 էն 'ի վեր Միացեալ-Նահանգաց և Սնդղիոյ մէջ առ 'ի կախ մնացած խնդիր մ'է : Ալապամա՝ ծովահէնի նաւ մ'էր, որ գերեվարաց պատերազմին առեն հարաւայինք՝ Սնդղիոյ կերտարաններէն մէկուն մէջ շինել տուին, և որուն միջոցաւ հիւսիսայնոյ վաճառականութեան մեծ վնասներ հասուցին : Հիմա որ պատերազմը լմնցաւ, Սմերիկա՝ Սնդղիայէն հատուցում կ'ուզէ, զոր Սնդղիացի



Խրաւագէտք ապօրինաւոր կը դռնեն : « Ամերիկա  
 « կը յաւելու Թալէրան , որ ըստ օրէ կը  
 « դարգանայ : Հսկայական զօրութիւն մը պիտի  
 « կազմէ , և օր պիտի գայ որ նոր դիւտերու (1)  
 « միջոցաւ Եւրոպայի հետ ևս առաւել դիւրաւ  
 « հաղորդակցելով պիտի բաղձայ մեր գործե-  
 « րուն մէջ բառ մ'ալ ինքն ըսել , և ձեռնամուխ  
 « ըլլալ՝ անոնց : Արդ քաղաքական խոհեմութիւնը՝  
 « հին ցամաքի վարչութեանց վրայ պարտք կը դնէ  
 « խղճի մտօք հսկել , որ այսօրինակ միջամտութեան  
 « մը պատրուակ չ'մնայ : Այն օրը՝ յ'որում Ամե-  
 « րիկա՝ ոտքը յ'Եւրոպա կը դնէ , խաղաղութիւնն  
 « ու ապահովութիւնն ընդ երկար անկէց պիտի հե-  
 « ռանան » :

Անկէց վերջը՝ Թալէրան՝ Գերմանիոյ վրայ կը  
 խօսի և տարիներ յառաջ այժմեան պատերազմին  
 հետեւանքը , կէտ առ կէտ կը գուշակէ :

« Պէտք չ'է երեւակայական յոյսերով խաբուինք ,  
 « Եւրոպական հաւասարակշռութիւնը զ'որ Աիէն-  
 « նայի արքայաժողովին մէջ հաստատեցինք՝ յաւեր-  
 « ժական չ'է : Թէ որ օր մը չ'ըլլայ , ուրիշ օր մը  
 « պիտի կործանի . սակայն դեռ մեզի քանի մը տա-  
 « րի խաղաղութիւն կը խօստանայ : Եւրոպայի հա-  
 « ռասարակշռութեան վաղ կամ անադան սպառնա-  
 « ցող վտանգը՝ այն խղճերէն կ'ուզան որք Գերմա-

(1) Հեռատես Թալէրան՝ հեռագրին դիւտն ալ կը գուշակէ՝ ըս



« նիտյ կեդրոնին մէջ տարածուած , ընդհանուր եւ  
 « զած են : Պաշտպանութեան դժուարութիւնները  
 « և հաւասար վտանգ մը՝ ոգիները սխառաստեցին  
 « Քերականական միութիւն մ'ուղեւու : Աս գաղա  
 « փարը սխաթի շարունակէ առաջ երթալ , և որ մը  
 « Քերականական դաշնակցութիւնը կազմող տէրու  
 « թիւններէն մին՝ սխաթի բաղձայ յ'օգուտ իւր աս  
 « միութիւնն իրականացնել : Աւտորիտյ կողմէն վախ  
 « նարու բան չ'կայ , սա տէրութիւնը որ զանազան  
 « տարերացմէ բազկայեալ է , և զուրկ 'ի միութե  
 « նէ , չ'կրնար միութեան գաղափարին նեցուկ ըլ  
 « լալ և զ'այն գուրս տարածել : Ուրեմն սէտք է  
 « Բրուսիտյ վրայ հսկողութիւն ըլլայ , վասն զի սա  
 « տէրութիւնն՝ իր բախտն սա ձեռնարկութեամբ  
 « սխաթի փորձէ , և եթէ յաջողի՝ հաւասարակչու  
 « թեան սպայմանները բոլորովին կը փոխուին , և  
 « Եւրոպայի համար նոր հիմունք ու կազմակերպու  
 « թիւն մը գտնել սէտք կ'ըլլայ » :

Եթէ Թալէրան դեռ ապրիլ և գործոյ գլու  
 խըն անցած ըլլար , չ'ենք կարծեր որ իր գուշա  
 կորեակեց կատարուիլ շուտով տեսնէր :



## ՃԱՌՔ ԹՄԼԵՐԱՆԻ

Թաղերան՝ առանձնութեան մէջ մերթ ընդ մերթ իր ձայնը կը հնչեցնէր կամ՝ սեպուհներու խորհրդաբանին մէջ և կամ՝ ՚ի ճեմարան Պատղիոյ, որոց երկուքին ալ անդամ էր :

Երկու նշանաւոր ճառ խօսած է, որոց մին՝ այդ քաղաքական և օրէնադիր ատենին մէջ մամլոյ ազատութեան վրայ, և երկրորդը՝ գիտնոց կաճառին մէջ, քաղաքագիտի մը վարույց վրայ, և օրք կրնան Թաղերանի գլխաւոր գործերն համարուիլ :

Նախ՝ իր առաջին ճառին ընտրագոյն պարբերութիւնները քաղենք իբր տխար իր ոճոյն և կարծեաց :

« Սուանոց մամլոյ ազատութեան սահմանադրանք  
 « կան վարչութիւն չկրնար ըլլալ, մամլոյ ազատութիւնը  
 « տութիւնը գլխաւոր և էական գործ լի մ'է, իւրաքանչիւր  
 « վարչութիւն իրեններն ունի . . . :

« Մարդկային միտքը մնայուն չ'է . երեկուան  
 « գիւտը իրեն համար ուրիշ նոր գիւտերու համեմատ  
 « լու միջոց մ'է : Մակայն ճիշդ է ըսել թէ մարդկային  
 « միտքը ճգնաժամեր ունի . վասն զի կայ ժամանակ  
 « մանակ, ուր մասնաւորապէս արտադրելու և երկնակա  
 « նելու պէտքը զ'ինք կը տանջէ, և ընդհակառակն  
 « ատեն ալ կայ ուր ետ կը դառնայ, և ևս առելի



« իր հարատու թիւնները կարգադրելու կ'զբաղի քան  
 « թէ զ'անոնք շատցնելու, և ուրիշ հարատու թիւն  
 « ներ ստանալու. տաանըեօթներորդ դարն՝ այս  
 « բախտաւոր դարերէն մէկն էր: Մարդկային միտ  
 « քը՝ զարմանալով այն անբաւ հարատու թեանց վը  
 « բայ, որոց տէր կ'ըլլար շնորհիւ տալազրութեան,  
 « կանգ կ'առնու հիացմամբ, աս շքեղ ժառանգու  
 « թիւնը վայելելու համար: Լուի Ժ. Բ. ի դարուն  
 « բոլոր մեծ հանձարները իրարու հետ կը մըցէին  
 « այն ընկերացին կարգը գեղեցկացնելու համար,  
 « որմէ անդին քան չ'էին տեսներ, որմէ անդին քա  
 « նի չ'էին փափաղէր, և զ'որ այնչափ տեսական կը  
 « կարծէին, որչափ այն մեծ թաղաւորին փառքը,  
 « որ իրենց յարգանաց և եռանդադին համակրու  
 « թեանն առարկան էր: Բայց երբ հնութեան այս  
 « բեզմաւոր հանքն սպառեցին, մարդկային մտաց  
 « դործունէութիւնն սկսաւ յ'այլուր որոնել, և ու  
 « թիշ տեղ նոր քան չ'կրցաւ գտնել, բայց եթէ  
 « այն շահադիտական հետադառութեանց մէջ որք  
 « բոլոր տալադան կը կազմեն, և որոց սահմաններն  
 « անժամօթ են: Տասն և իններորդ դարն՝ աս դի  
 « տումներով սկսաւ, տասն և իններորդ դարը՝ որ  
 « իր նախորդին հետ այնչափ թիշ նմանութիւն ու  
 « նէր: Տեղեւարաց բերթողական դասերուն, Օրինաց  
 « ոգւոյն (անմահ գործ Վօնդէսքիէօյի) տեսութիւն  
 « ները կը յաջորդէին, և Հակոբազխաակ քառարանը՝  
 « Բառ—Տաւադի (գիրք փիլոսոփայութեան) տեղ



« կը բռնէր »

« Աը խնդրեմ, Պարոնայք, դիտեցէք որ ոչ կը  
« սխալարակեմ, ոչ կը դրուատեմ, այլ ազարդապէս  
« կը սլատմեմ »

« Յեղախոխութեան Գաղղիոյ վրայ թախած չա-  
« րիքը Չեզ յիշեցնելով՝ պէտք չ'է սակայն բողբո-  
« վին անարդար գտնուիլ այն գերագոյն հանճարնե-  
« բուն նկատմամբ որք այդ յեղախոխութեան շար-  
« ժառիթ եղան, և պէտք չ'է մոռնանք որ եթէ նո-  
« քա իրենց գրուածներուն մէջ չ'կրցան միշտ ան-  
« սրխալ մնալ, դարձեալ քանի մը մեծ ճշմարտու-  
« թեանց յայտնութիւնն իրենց գործն եղած է »  
« Չ'մոռնանք մանաւանդ որ իրենք չ'են կրնար պա-  
« տասխանատու ըլլալ Գաղղիոյ մէկէն 'ի մէկ և  
« անխորհուրդ կերպով այն ասպարիողին մէջ խիզա-  
« խելուն, զոր իրենք լոկ մատնանիշ ընել բաւա-  
« կան համարած էին . . . » :

« Արդ՝ Պարոնայք, կ'ուզէ՞ք դիտնալ թէ 1789  
« ին ժամանակին ճշմարիտ պահանջումները որո՞նք  
« էին » Բացէ՛ք զանազան կարգերու (1) արձանագ-  
« բութիւնները : Այն ատենուան լուսաւորեալ մար-  
« դոց իմաստուն իղձերը ես ժամանակին պահան-  
« ջումները կը կոչեմ : Սահմանադիր ժողովն՝ այդ  
« իղձերուն թարգմանն եղաւ երբ հրատարակեց  
« նախ ազատութիւն կրօնից, ազատութիւն անհա-

(1) Կղեր, արհմուտակներ և ժողովուրդ .



« սակիան իրաւատութեան և ազատութիւն մամլոյ »

« Ժողովր՝ ժամանակին պահանջմանց այնչափ  
 « համաձայն չէր երբ ինքզինք միակ դատարան  
 « հրատարակեց , երբ արքունի վաւերացումը ջնջեց ,  
 « երբ խիղճը բռնարարեց և այլն և այլն : Եւ սակայն  
 « իր սխալանայ հետ , որոց մէկ փոքր մասը միայն  
 « յիշեցի և որոց ետևէն մեծ աղէտներ եկան , ա  
 « պապայ սերունդը որ իրեն հետ կ'սկսի , կը ճանչէ  
 « թէ մեր հատարակային իրաւանց հիմունքն հաստա  
 « տելու փաստքն այդ ժողովին կը վերաբերի :

« Աստահ եղիք որ երբ երկրի մը լուսաւորեալ  
 « անձինքը զանազան դէպքերով լի տարիներու մի  
 « ջոց՝ շարունակ բան մը աղէկ և օգտակար կը հը  
 « րատարակեն , այդ բանը ժամանակին մէկ պա  
 « հանջումն է : Այսպէս է , Պարոնայք , մամլոյ ա  
 « զատութիւնը . . . » :

« Ամենէն հանդարտ ընկերութիւնք՝ որք ամենէն  
 « աւելի երջանիկ պէտք էին ըլլալ , իրենց ծոցը  
 « խումբ մը մարդիկ կը պարունակեն որք կ'ուզեն ,  
 « խումբութեան և անկարգութեան միջոցաւ ձեռք  
 « բերել այն հարատութիւնները որոցմէ դուրի են ,  
 « և ստանալ այն կաւորութիւնը զ'որ պէտք չէր ու  
 « նենային : Խոհեմութի՞ւն է արդեօք ընկերային  
 « բարեկարգութեան թշնամիներու ձեռքը տօգո  
 « հութեան այնպիսի պատճառներ տալ , առանց ո  
 « րոց իրենց ապերախտ շարութիւնն անկարող պի  
 « տի մնար :



« Ընկերութիւնն իր աստիճանաւոր յառաջդիմութեան մէջ նոր հարկերու պէտքն դրաւր միճաւ  
 « կեալ է, գիտեմք և կը հասկընամք թէ, վարչութեան  
 « թիւնք՝ պէտք չ'է անապարեն այս հարկերը ճան  
 « չելու և դ'անունք դործադրելու : Բայց երբ՝ ան  
 « դամ մը դ'անունք ընդունին, և ճանչեն, առնել  
 « ինչ որ տուին, կամ որ նոյն բանն է, դ'այն ան  
 « դադար դադրեցնել յանդիմութիւն մ'է . . . :

« Երբ մամուլն ազատ է, երբ խրատանչիւր որ  
 « կրնայ դիտնալ թէ իր շահերը կը պաշտպանուին  
 « կամ պաշտպանուած են, վաղ կամ անապահ ժա  
 « մանակէն արդարութիւն մը կ'սպասեն, և յոյսը  
 « նեցուկ կ'ըլլայ և իրաւանք . որովհետեւ այս յոյսը  
 « չ'կրնար խարտիլ . բայց երբ մամուլը գերի է,  
 « երբ և ոչ մէկ կողմէ ձայն մը կրնայ բարձրանալ,  
 « այն ժամանակ դժգոհութիւնք կ'ատիպեն դ'վար  
 « չութիւնք՝ կամ բողոքովին թուլ ու տկար ընթացք  
 « մը բռնելու, և կամ զսպողական ուժովն միջոց  
 « ներու դիմելու » :

Այս ճատը մէջ բերելէ ետք, ծաղկաբաղ մ'ալ  
 ընենք իր երկրորդ ճառէն որ Փարիզու բարոյական  
 և քաղաքական գիտութեանց ճեմարանին մէջ խօ  
 տեցաւ 1838 մարտ 3 ին : Աս ճատը առաջինէն ըն  
 տիր է, ըստ որում քաղաքագէտն Փալէրան՝ հաս  
 տիւն քաղաքագիտի մը ներքողը կ'ընէ, և Պ.  
 Ռէնհարի վրայ խօսելով կ'ուզէ ցուցնել թէ քաղա  
 քագէտ մ'ինչ յատկութիւններ ունենալու է :



« . . . Այսօր վերջին անգամ մ'ըլլալով աս կա  
 « ճառին ներկայանալու հարկը կ'ըզամ, որպէս զի  
 « բոլոր Եւրոպայի ծանօթ մարդու մը յիշատակը  
 « զ'որ կը սիրէի, և որ ճեմարանին հաստատութեանն  
 « 'ի վեր պաշտօնակից էր մեզ, հոս մեր յարգանայ  
 « և ցաւոց հրապարակային վկայութիւնն ընդունի :  
 « Իր և իմ զիրքս կարող կ'ընեն զիս նորա խել  
 « մ'արժանեաց արտայայտութիւնն ընելու : Ար վա  
 « ռայ՝ չեմ ըսեր միակ այլ դվսաւոր տխուրսը այն  
 « քառասուն տարուան թղթակցութիւնն է, որուն  
 « հասարակութիւնն անտարակոյս անտեղեակ է, և  
 « ինչպէս շատ հաւանական է, անտեղեակ ալ պի  
 « տի մնայ : Արդ ինքնիրենա ըսի, ո՞վ աս կաճառին  
 « մէջ՝ այդ անձին վրայ պիտի խօսի, եթէ ոչ ես՝  
 « որ այդ թղթակցութեան մեծ մասն ընդունեցայ,  
 « անոր ընթերցումն մեծ հաճոյք իմացայ և որոցմէ  
 « ստէպ օգուտ քաղեցի իմ նախարարական պաշ  
 « տամանոցս մէջ, զ'որ երեք իրարմէ տարբեր իշ  
 « խանութեանց ատեն վարեցի :

« Ռէնհար կոմսն՝ երեսուն տարեկան էր, և ես  
 « երեսունու-եօթ տարեկան էի երբ առաջին անգամ  
 « զ'ինքը տեսայ : Խորին հմտութիւն ստացած՝ գոր  
 « ծոց մէջ կը մտնէր : Հինգ կամ վեց լեզու շատ  
 « անլէկ սովորած էր, և որոց գրագիտութեանն ալ  
 « ընտելացած էր : Արնար նշանաւոր հանդիսանալ  
 « թէ իբրև քերթող, թէ իբր պատմարան, և թէ  
 « իբրև աշխարհագիր, և աս վերջին յատկութեանն



« Համար ճեմարանին հաստատութենէն 'ի վեր անոր  
 « անդամ անուանեցաւ :

« Այդէն աս թուականին Աթիւնկէի գիտութեանց  
 « ճեմարանին անդամ էր : Գերմանիոյ մէջ ծնած  
 » ու դաստիարակուած ըլլալով՝ իր սրտանեկու  
 « թեան ատեն քանի մ'ոտանաւոր հրատարակեր  
 « էր , որք Աեօնէրի , Աիելանի և Շիւէրի ուշագ  
 « լուծիւնն հրատարակեցին : Քիչ վերջը , իր առող  
 « ջութեանն համար Քարլսպատի ջերմուկներն եր  
 « թալու ստիպուելով՝ հռչակաւոր Աթիւն հոն գրա  
 « նելու և յաճախ դ'այն տեսնելու երջանկութիւնն  
 « ունեցաւ , որ Ռէնհարի ճաշակին ու հմտութեանց  
 « արժէքն այնչափ ճանչեց որ աղաչեց դ'այն Գաղ  
 « դիական գրագիտութեան մէջ նշանաւոր գործ  
 « մ'եղած ատեն՝ իրեն իմաց տալ . դերագոյն մար  
 « դոց մէջ աս տեսակ յանձնառութիւնք փոխադարձ  
 « են և վաղընդփոյթ բարեկամական կապերու կը  
 « փոխուին . Ռէնհարի և Աթիւնի մտերմութիւնը աս  
 « երկուքին թղթակցութեան շարժառիթ եղան ,  
 « դ'որ այսօր Գերմանիոյ մէջ կը տպեն :

« Ռէնհար՝ իրեն համար քաղաքագիտական աս  
 « սարեղը նախամեծար համարեց և աղէկ ըրաւ .  
 « աս ասպարէզին ամէն սրտամանց յարմար ըլլա  
 « լով՝ յաջորդաբար և յաջողութեամբ դ'անոնք վա  
 « րեց :

« Հոս կը համարձակիմ ըսել՝ թէ իր նախնական  
 « ուսմունքն ալ դ'ինքը յաջողութեամբ սլատրաս



« տեր էին աս վիճակին : Մանաւանդ աստուածա-  
 « բանութեան ուսումը՝ որուն մէջ նշանաւոր հան-  
 « դիսացաւ երբ ՏէրէնտորՖի կրօնական դպրոցին և  
 « Թուպլինկէի բողոքական վարժարանին մէջ էր ,  
 « իր դատողութեան մեծ զօրութիւն մը տուաւ որ  
 « բոլոր իր գրչէն ելած գործերուն մէջ կը նշմարուի :  
 « Եւ որպէս զի չըսուի թէ այլանդակ դադարաւոր մը  
 « յառաջ կը բերեմ , կ'ստիպուիմ հոս մէջ բերել  
 « մեր մեծ դեսպաններուն և բանակցողներուն ա-  
 « նունները , որոց ամէնն ալ աստուածարան էին ,  
 « և պատմութեան մէջ նշանաւոր հանդիսացած ,  
 « ըստ որում իրենց ժամանակին քաղաքական գոր-  
 « ծերն աղէկ վարեցին , - Տիւրրա կարդինալը՝ որ  
 « քաղաքային իրաւանց այնչափ հմուտ էր , որչափ  
 « եկեղեցական իրաւանց , և որ Աէօն Ժ . ի ցուցուց  
 « այն դաշանց հիմունքը , որոնցմէ մեծ մասը դեռ  
 « այսօր կեցած է , - Աարդինալ Տ'Օսաա՝ որ մեծ տէ-  
 « րութեանց շատերուն ջանից հակառակ , յաջողե-  
 « ցաւ զ'Նենրիկոս Գ . Հռոմի հետ հաշտեցնել : Իր  
 « նամակաց հաւաքածուն՝ դեռ այսօր ալ քաղաքա-  
 « կան ասպարէզի պատրաստուող երիտասարդաց կը  
 « կարդայնեն , — Աարդինալ Բօլլինեար՝ աստուա-  
 « ծարան , քերթող և բանակից (Նէկօսիադէօր) որ  
 « այնչափ դժբախտ պատերազմներէ յետոյ Ռէթ-  
 « բելսի դաշնադրութեամբ՝ կրցաւ Պադղիոյ պա-  
 « հել Առի ԺԳ . ի երկրակալութիւնքը . . . :  
 « Յիշած անուններս կը բաւեն ինձ զ'իս արդա-



« րայնելու համար, երբ ըսեմ թէ Ռէնհարի առաւ,  
 « ջին ուսմունքը՝ զոր հայրենի դաստիարակութիւն  
 « նր տուած էր իրեն մեծ ազդեցութիւն ունեւ,  
 « ցան իր մտայ վրայ :

« Իր զանազան և խորին հմտութիւնները՝ զին  
 « քը ՚ի Պորտո կոչեցին, առ քաղքին մէկ բողոքաւ  
 « կան դերդաստանին մէջ ուսուցչի պատուաւոր այլ  
 « համեատ պաշտօնը վարելու :

« Հոն բնականապէս յարարելութիւններ ունեւ  
 « ցաւ այն մարդոց մեծ մասին հետ, որոց տաղան  
 « դը, սխաղանքն ու մահը մեր առաջին օրէնադիր—  
 « ժողովոյն վրայ այնչափ յայլ ձգեցին :

« Չեմ ուզեր Պ. Ռէնհարի երկար ասպարիզին  
 « մէջ իր վիճակի մեծամեծ տարբերութեանց քայլ  
 « առ քայլ հետեիլ . . . :

« ՉՌէնհար՝ կը տեսնենք առաջին քարտուղար  
 « Լօնարայի դեպտանատան—նոյն պաշտամանի ՚ի  
 « Նարոյի—իսպոր պաշտօնեայ ՚ի Համալուրի, Պը  
 « րէմէն և Լուպէր—Սրտարին գործոց պաշտօնաւ  
 « տան երրորդ բաժնին գլուխ, — իսպոր Պաշտօ  
 « նեայ ՚ի Տիօրէնցա—Սրտարին գործոց պաշտօ  
 « նեայ—ընդհանուր Հիւպատա ՚ի Միլան . . . Տե  
 « սուչ քարտուղարութեան Սրտարին գործոց պաշ  
 « տօնատան . . . — իսպոր Պաշտօնեայ Քերսանաւ  
 « կան առաջաժողովին քով ՚ի Տրանսփօրթ և այլն  
 « և այլն :

« Արչա՛փ տեղ, որչա՛փ պաշտօն, որչա՛ն շա՛



« հեր մէկ մարդու յանձնուած , և այն ալ այնպիսի  
 « սի ատեն մը ուր գողցես տաղանդներու արժէքն  
 « այնչափ քիչ կը ճանչցուէր որչափ որ ամէն գործ  
 « պատերազմաւ կը լիննար :

« Մի սպասէք յ'ինէն , Պարոնայք , Թուական  
 « առ Թուական և մանրամասն տեղեկութիւն Ռէն  
 « հարի աշխատութեանց՝ այն զանազան պաշտօններ  
 « բուն մէջ զ'որ համբեցի : Ստոր համար գիրք մը  
 « պէտք է (1) :

« Ես մինակ սլտի ըսեմ ձեզ թէ ինչ եղանաւ  
 « կաւ կ'ըմբռնէր իր պաշտօնները , կ'ուզէր պաշտօ  
 « նեաց ըլլար , կ'ուզէր գլուխ բաժնի կամ Հիւպա  
 « տու . . . :

« Ռէնհարի զխտող ոգին կը ցուցնէր իրեն թէ  
 « որչափ քիչ կը գտնուի մարդ մը , որ կարենայ  
 « արտաքին գործոց պաշտօնէի մը յատկութիւններն  
 « ամբողջ ունենալ : Սրդարեւ պէտք է որ արտաքին  
 « գործոց պաշտօնեաց մը տեսակ մը բնագոյում ու  
 « նենայ , որ շուտ մը ղինքն արթնցնելով , որ և է  
 « միճարամտութենէ յառաջ չ'թողու որ իրեն անունն  
 « աղարտէ : Պէտք է բոլորովին անթափանցելի մը  
 « նալով ինքզինք սիրար բաց (գաղտնայայտ) ձեւ  
 « ցընէ . պէտք է որ իր խօսակցութիւնը՝ պարզ ,  
 « զանազան և անակնուրնելի , միշտ բնական և եր

---

(1) Ըսել է Թալէրանի վարուց համար ալ ամբողջ մատենադա  
 րան մը :



« բեմն ալ պարզմտական ըլլայ : Ի հակիրճ բան  
 « քսան և չորս ժամու մէջ պէտք չ'է և ոչ վայրիկ  
 « մի դադրի արտաքին դործոց պաշտօնեայ ըլլալէ :  
 « Սակայն բոլոր այս յատկութիւնները որչափ  
 « հազուադիւտ ալ ըլլալու ըլլան չ'են բաւեր , եթէ  
 « վստահութիւնն ու հաւատարմութիւնը երաշխաւո-  
 « բութիւն մը չ'ըլլան առ յատկութեանց , երաշ-  
 « խաւորութիւն՝ որուն շատ պէտք ունին : Աս կէտը  
 « պէտք է հոս յիշեմ , ջնջելու համար այն նախապա-  
 « շարումը որ ընդհանրապէս տարածուած է (1) :  
 « Ա՛չ , քաղաքագիտութիւնը՝ խորամանկութեան և  
 « և երկդիմաբան կեղծաւորութեան արուեստը չ'է :  
 « Եթէ վստահութիւնը տեղ մը հարկաւոր է , այն  
 « ալ քաղաքական վտխանցմանց մէջ է : Ասան դի-  
 « վստահութիւնն է որ զ'անոնք տւական և հաստա-  
 « տուն կ'ընէ : Զգուշաւորութիւնն ու խոհեմութիւ-  
 « նը ուղեցին խորամանկութեան հետ շփոթել :  
 « Վստահութիւնը երբէք խորամանգել չ'հրամայեր ,  
 « այլ զգուշաւորութիւն կը պատուիրէ , և զգուշա-  
 «ւորութեան գլխաւոր յատկութիւնն վստահութիւն  
 « աղդելն է :

. . . « Ճարտար պաշտօնեայ մ'ըլլալէ ետք դեռ  
 « որչա'ի բան գիտնալու է աղէկ Հիւսպատոս մ'ըլ-

(1) Հոս դժբախտաբար մեր երկրին մէջ ալ քաղաքագիտու-  
 թեան վրա նախապաշարումներ կան , որոց՝ Թաշեղանի բերնով  
 կը սրտասխանենք :



« լալու համար : Ասան զի Հիւպատուսի մը ստորու  
 « գելիրը յ'անչափա դանադան են , և Սրտաքին գոր  
 « ծոց պաշտօնատան ուրիշ պաշտօնատեարց ստորու  
 « գելիներէն շատ տարրեր : Խոււմբ մը փորձառա  
 « կան հմտութիւններ կը պահանջեն , որոց համար  
 « մասնաւոր կրթութիւն մը հարկաւոր է : Իրենց  
 « ստորոգելեաց շրջանին մէջ , Հիւպատուսք՝ իրենց  
 « քաղաքացեաց նկատմամբ դատաւորի , իրաւախո  
 « հի , և հաշտարարի պաշտօն կը վարեն : Շատ ան  
 « դամ ծնունդ , մահ և ամուսնութիւն կ'արձանագ  
 « բեն , նօտարի պաշտօն կը վարեն , երբեմն ալ  
 « ծովային գործոց տեսչութիւն կ'ընեն , տեղւոյն ա  
 « ոտղջական վիճակին վրա կը հսկեն ու տեղեկա  
 « զիր կուտան . . . :

« Ահնհարի հետազօտութիւնը՝ կը մղէր զ'նա հաւա  
 « տալու թէ պիտի դար ժամանակ , ուր ճարտարու  
 « թեամբ (էնտիւսթրի) պատրաստեալ միջոցներով  
 « վաճառականութեան և նաւարկութեան ընդհանուր  
 « դրութիւն մը հաստատուէր , որով ամէն ազգաց  
 « շահերը յարգուէին , պաշտպանուէին , և անոնց  
 « հիմունքն՝ այնպէս ըլլային որ մինչև անգամ սլա  
 « տերագլը՝ եթէ անոնց հետեւանքներէն մէկ քա  
 « նիին դանցառութիւն ընել տար , չկրնար գէթ  
 « սկզբունքն այլայլել . . . :

« Բայց մարդու հմտութիւնքը՝ որքան ընդարձակ  
 « ալ ըլլալու ըլլան , իր յաջողակութիւնը որչափ  
 « մեծ ալ ըլլալու ըլլայ , կատարեալ քաղաքացիտ



« մ'ըլլալ հազուադիւտ բան է, և սակայն Պ. Ռէն-  
 « հար այդ ալ կրնար ըլլալ եթէ յատկութիւն մ'ա-  
 « լելի ունենար. լաւ կը տեսնէր, լաւ կը լսէր,  
 « գրիչ 'ի ձեռին տեսածին և լսածին սքանչելի կեր-  
 « սով տեղեկութիւն կուտար. . . : Բայց այս մար-  
 « դը որ այնչափ սքանչելի կը գրէր, դժուարաւ  
 « կրնար խօսիլ ու միտքը բացատրել. . . :

« Ս.ս իրական անսպառչածութեան հետ, Պ.  
 « Ռէնհար գրեթէ միշտ յաջողեցաւ ընելու և լաւա-  
 « սէս ընելու ինչ որ իրեն կը յանձնէին : Սպարէն  
 « ո՞ւր կը դանէր իր յաջողելու միջոցները, ուստի՞  
 « կ'ատանար իր ներշնչութիւնքը :

« Պարոնայք, դ'անոնք ճշմարիտ և խորին զգա-  
 « ցումէ մը կը քաղէր, ըսել կ'ուզեմ պարտուց  
 « զգացումէն : Դեռ բաւական չ'են գիտեր մարդիկ  
 « թէ աս զգացումն ի՞նչ զօրութիւն ունի : Սմբող-  
 « ջապէս սպարտուց նուիրեալ կեանք մը փառասի-  
 « րութենէ դիւրաւ կ'ազատի. . . :

« Պարտուց կրօնքը՝ որուն Պ. Ռէնհար իր բո-  
 « լոր կենաց մէջ հաւատարիմ դանուեցաւ, իրեն  
 « համար ուրիշ բան չ'էր, այլ ճիշդ հնադանդու-  
 « թիւն իր մեծաւորներուն հրամանաց. . . :

« Թէև Պ. Ռէնհարի տարիքը՝ ա՛լ կ'ատիպէին  
 « դ'ինք հանգստանալու, սակայն ինք երբէք չ'զխաի  
 « ուղէր գործերէ քաշուիլ, այնչափ կը վախնար որ  
 « պաղութիւն չ'ցուցնէ այն ասպարէզը մատուցած  
 « ծառայութեանց մէջ, որոյ նուիրած էր իր բոլոր



« կեանքը : Ահաք էր որ արքունի բարեօրոտութիւնը »  
 « որ միշտ ուշագիտ է , նախատեսէ Ռէնչարի պէտ-  
 « քը , և Պաղղիայ սա մեծ ծառային ամենապատ-  
 « ուաւոր դիրք մը տայ , կոչելով զ'նա յ'անդամակ-  
 « ցութիւն սեպուհներու խորհրդարանին :

« Ամսն Ռէնչար շ'կրցաւ երկար ժամանակ սա  
 « պատիւը վայելել , և գրեթէ յեղակարծ մեռաւ  
 « 25 դեկտեմբեր 1837 ին :

« Պ . Ռէնչար երկու անգամ ամուսնացած է .  
 « առաջին ամուսնութենէն մէկ զաւակ կը թողու :  
 « Սյապիտի հօր մը զաւակին նուիրելի ընտրագոյն  
 « մաղթանքը՝ վառիաղիլ է որ իր հօր նմանի » :

Վ Ե Ր Զ







# ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ար տեսնեմ Ազգին մէջ անցածին տեղեկանաւ,  
լու բաղձանք մը որ ներկայ արտաքոյ կարգի մեծ  
դէպքերուն առթիւ և ու առաւել կ'ընդհանրանայ :

Պատմութիան ըստ երբեմն երևելի հանձար մը,  
իր վաղամեռիկ Ազաթօն Էֆէնտի վրայ խօսած  
Պամբանականին մէջ, պատմութիւնն՝ աղխապիտի  
դիպաց շարք մը չ'է : Եւ իրաւունք ունէր :

Ներկան անցելոյն արդիւնքն է, ինչպէս ասլա-  
գայն ներկային :

Սըտանի աղէտը՝ հասկնալու համար պէտք է  
մարդ՝ Վաթէրլուի տեղեակ եղած ըլլայ, Պամար-  
քի քաղաքականութիւնը մեկնելու համար Հարտէն-  
պէրկի վարքը գիտնայ, Մօլթի յատակագծերն  
ըմբռնելու համար, Մեծին Տրէտէրիքի ընթացքին  
հմուտ ըլլայ, վերջապէս ըստ հասու ըլլալու համար՝  
այս օրուան անցածին պէտք է երեկուանք գիտնայ :

Ապարէն ազգին համար քաղաքական գրուա-  
ծոց և պատմութեանց պակասն զգալի էր, պակաս՝  
դ՛որ մերթ ընդ մերթ ջանացին ընդ հեղինակը ու  
մանք պատմական և քաղաքագիտական գրուածոց



որք իբր ծաղիկ յ'անապատի Հայ դրագխտութեան  
մէջ կը փայլին :

Տեսնելով նոցա դատած ընդունելութիւնը և ու-  
ղեւում որ սա նկատմամբ ևս ալ ծառայութիւն մ'ը-  
րած ըլլամ ազգին , Թաղէրանի վրայ տեսութիւն  
մը գրեցի , Թաղէրանի՝ որ ԺԹՐԴ դարու մեծ քա-  
ղաքագիտաց մին է և որոյ վարքը քաղաքակիրթ  
մեծ ազգի մը սրատնութեան մի քանի կարևոր է-  
ջերը կը կազմէ , Թաղէրանի՝ որոյ հեռատես ոգին  
այս օրուան անցածին 30-40 տարի յ'առաջ անսխալ  
դուշակ եղած էր :

Թերևս իմ Թաղէրանս՝ աղօտ կերպով ներկայա-  
ցընէ այդ մեծ հանճարը , թերևս հասարակութիւնն  
իմ գ'այն հրատարակելու նպատակը չըմբռնէ ,  
սակայն սիրելի է ինձ յուսալ՝ որ գէթ աւելի ան-  
նըչան մարդոց վարքին չափ ընդունելութիւն մը  
գտնայ , ընդունելութիւն որ քաջալերութիւն մ'է ,  
ոչ միայն ինձ որ դուրի չ'եմ 'ի խրախուսէ այլ բո-  
լոր այն ուսումնական անձանց որք քան գ'մեզ յա-  
ջողակ կը վարանին յ'ասպարէզ գրականութեան  
դիմել :

Թաղէրանի վարուց վրայ տեսութիւն մ'ընելէ  
ետք՝ հարկ էր իր նշանաւոր ժամանակակիցին ՄԷԹ-  
ԹԷՐՆԻԲ իշխան սղաչտօնէին վերայ ալ տեսու-  
թիւն մ'ընել :

Մէթթէրնիքի կեանքը Թաղէրանին վարքը կ'ամ-  
բողջացնէ , և հասու կ'ընէ զ'ընթերցողն այն թը-



ւականին սկզբանց ու ճգառամներուն որոնք այս  
օրուան քաղաքականութեան ու դէպքերուն ծնունդ  
տուին :

Ինչպէս որ Թալէրանի վարուց մէջ ուզեցի դի-  
տողութիւններ ընել վարչական ձեւերու վրայ , նը-  
մանապէս աշխատած եմ Մէթթէրնիքի քաղաքա-  
կանութեան վերայ ըրած հետադատութեանցս մէջ՝  
խօսիլ նաև ազգայնութեան իրաւանց , պահպանու-  
ղական սկզբան , Եւրոպական հնգապետութեան ,  
դեպքանած ողորմներու և Եւրոպական հաւասարա-  
կըշտութեան վրայ :

Բայ ասկից , ինձ կը մնայ հետզհետէ հրատարա-  
կել իմ միւս երկու գործերս ալ , մին՝ տեսութիւն  
Իտալական միութեան հիմնադիր Քալուր Կոմսին  
վրայ և միւսը գերեաց ազատութեան ջանադիր  
Նախադահ Ղինքօլնի վրայ և այս չորեքին տեսու-  
թեամբք ծանօթացնել մերայնոց վերջին աւուրց  
քաղաքական մեծ մարդիկը , որոց անուններն ամէն  
օր լրագիրք կը յեղյեղեն և որք ընկերային ու քա-  
ղաքական մեծ գործերու և մեծ սկզբանց հեղինակ  
եղան :



Handwritten text at the top of the page, appearing as bleed-through from the reverse side.

Main body of handwritten text, consisting of several lines of cursive script.


Second main body of handwritten text, continuing the cursive script.

Final section of handwritten text at the bottom of the page.











THE UNIVERSITY

LIBRARY

---



ՄԱՄԼՈՅ ՏՍԿ



ՄԷԹԹԷՌՆԻՔ













781

2013



